ՏԻԳՐԱՆ ՀԱՅԱՁՆ



ԽԵՆԹԵՐԸ

«ՆԻԳ-ԱՊԱՐԱՆ» հայրենակցական, բարեգործական
հասարակական կազմակերպություն

ՏԻԳՐԱՆ ՀԱՅԱԶՆ

ԽԵՆԹԵՐԸ

ՍԻ ՏՈՀՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐԸ

Երևան
Հեղինակային հրատարակություն
2008

ՀՏԴ 941 (479.25) (03)
ԳՄԴ 63.3(2Հ) g2
Հ 246

ՏԻԳՐԱՆ ՀԱՅԱԶՆ (Տիգրան Մնացականի Պետրոսյանց),
Հ 246 Խենթերը- Եր.: Հեղինակային հրատարակություն,
2008 -, 48 էջ, կես մամուլ նկար:

Մասնագիտական խորհրդատու
պատմական գիտությունների թեկնածու **Համլետ Գևորգյան:**

«***Խենթերը***» հանրագիտարանը ստեղծվել է վավերական-պատմական աղբյուրների հիման վրա, նվիրված է պատմական Նիգ-Ապարանի Արագյուղ բնակավայրում 1828 թվականին հաստատված Տեր-Պողոսյանների տոհմին ու այդ տոհմի մարդկանց 180-ամյա պատմությանը և նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

ԳՄԴ 63.3(2Հ) g2

ISBN 978-9939-53-064-2 **© ՏԻԳՐԱՆ ՀԱՅԱԶՆ 2008**

2008 թվականի մայիսի 28-ին լրանում է
Ապարանի հերոսամարտի 90 - ամյակը:
Հավերժ փառք Այդ Հաղթանակը
կռած աշխարհազորայիններին
ու կանոնավոր բանակի մարտիկներին:

Գիրքը հրատարակվում է
«Տիգրան Մեծ» հրատարակչության տնօրեն,
«Նիգ-Ապարան» ՀԲՀԿ նախագահ
ՎՐԵԺ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ
հովանավորությամբ

Գրքի պատրաստման օգնելու համար հեղինակը
շնորհակալություն է հայտնում Տեր-Պողոսի տոհմից սերված
Գոռ Ղազարյանին

Բովանդակություն

Մուտք 5
Բաֆֆի, «Խենքը», վեպ (հատված) 7
Հեղինակի կողմից 13
Հանրագիտակ 17
Հավելվածներ 30
Օգտագործված գրականության ցանկ 46
Հեռախոսահամարներ 47

Սուտք

Ուղիղ 90 տարի առաջ՝ 1918 թվականի մայիսի 22-ին Ապարան քաղաքի հյուսիսային բարձունքներում սկսվեց Ապարանի հերոսամարտը՝ այդ կողմով Հայաստան մտած ու դեպի Երևան շարժվող թուրքերի դեմ:

Թուրքական կանոնավոր բանակի դեմ ելան, նրա առաջխաղացումը կանգնեցրեցին և օրուկես կռվեցին Ապարանի գավառամասի գյուղերի աշխարհազորայինները: Նրանք հայկական կանոնավոր զորամիավորումների մարտիկների հետ ուսուսի մարտնչեցին նաև հերոսամարտի հաջորդ հինգ օրերին:

Աշխարհազորի գործողությունները ղեկավարում էր հերոսամարտի կազմակերպիչներից Արսեն Տեր-Պողոսյանը:

Հերոսամարտի բոլոր յոթ օրերին նա ղեկավարեց հիմնականում ապարանցիներից կազմավորված շուրջ 5000-անոց աշխարհազորի գործողությունները:

Հերոսամարտն ավարտվեց հայկական կանոնավոր բանակի մարտիկների ու ապարանյան աշխարհազորի կատարյալ հաղթանակով: Թուրքական 10000 զինվորներ ունեցող կանոնավոր զորամիավորումը, որին միացել էին տեղական թուրքերի ու քուրդ ելուզակների անկանոն ջոկատները՝ տալով ավելի քան 3000 սպանված՝ անկանոն նահանջեց Ապարանի մատույցներից:

Պաշտպանությունը և Հաղթանակը կռող հերոսը՝ Արսեն Տեր-Պողոսյանը ոչ պակաս հերոս մարդու որդի էր:

Նրա հայրը Բայազեդի հերոս Սամսոն Տեր-Պողոսյանն էր: Այն խիզախ ու անվեհեր մարտիկը, որ իջավ քրդերի կողմից պաշարված Բայազեդի բերդի պարսպից և խենթ ձևանալով՝ կտրեց-անցավ թշնամու շղթան ու գեներալ-լեյտենանտ Արզաս Տեր-Ղուկասովին հասցրեց Բայազեդի պաշարման լուրն ու ապահովեց պաշարյալների փրկության գործը:

Հենց Սամսոնի պատմությունն է դարձել մեծագույն պատմավիպասան Ռաֆֆու «Խենթը» վեպի հերոս Վարդանի կերպարի իրական հիմքը:

Հայր ու որդի այս հերոսների տոհմը Արևելյան Հայաստանում հաստատվել է 180 տարի առաջ: Բնակվել է Արայի լեռան հարավային ստորոտին փռված Արագյուղ գյուղում:

180 տարին պատմության համար ակնթարթ է, իսկ տոհմի համար նվազագույնը հինգ սերնդի ապրելու ու գործելու ժամանակ: Եվ այդ 180 տարիները խենթերի այս տոհմն ապրել է պատասխանատվությամբ ու նվիրումով՝ յուրաքանչյուր սերնդի ներսում ապահովելով այդ ժամանակի հերոսի կերպարը:

Տեր-Պողոսյանների գերդաստանի պատմությունը և ուսանելի, և դաստիարակչական է, և՝ շարունակական: Տեր Պողոս - Սամսոն Առաջին - Արսեն Առաջին - Սամսոն Երկրորդ - Արսեն Երկրորդ - Սամսոն և Արսեն Երրորդներ ... Սամսոն Առաջինը եղել է ցարական բանակի գնդապետ, Արսեն Առաջինը՝ հունական բանակի գնդապետ, Արսեն Երկրորդը՝ խորհրդային բանակի փոխգնդապետ - դիվիզիայի հրամանատարի տեղակալ... Ակտիվ մասնակցություն Ապարանի հերոսամարտին, խորհրդային Հայրենական մեծ պատերազմին (պատերազմ մեկնած չորս Տեր-Պողոսյաններից երեքը զոհվել են), Արցախյան ազատամարտին... Ակտիվ մասնակցություն Խխորհրդային Հայաստանի և Խորհրդային Միության կայացման գործին (Վասակ Տեր-Պողոսյանը եղել է ՀԽՍՀ ֆինանսների նախարար, Սամսոն Արսենի Տեր-Պողոսյանը՝ շուրջ ինը հազար բանվոր ունեցող գործարանի տնօրեն, Ալբերտ Պողոսյանը՝ շուրջ երկու հազար բանվոր ունեցող գործարանի տնօրեն)...

Տեր Պողոսի տոհմը մնայուն հետք է արձանագրել Հայոց պատմության էջին: Տեր-Պողոսյանների տոհմը շարունակում է գրել իր պատմությունը:

«Խենթերը» հանրագիտարանային տեղեկատուն փաստաթղթերի օգնությամբ ամբողջացնում է այդ տոհմի պատմությունը:

Եվ երանի, որ այս հրատարակությունը հող նախապատրաստի հայասեր ու հայրենասեր, Ապարանի ճակատամարտի հերոս Արսեն Տեր-Պողոսյանի աճյունը Բուխարեստից տեղափոխելու և Հայրենի Հողում ամփոփելու գործին:

Բաֆֆի, «Խենքը», վեպ (հատված)

Ա

Բայազեդը պաշարված էր:

... Պաշարումը պատահեց 1877 թվի հունիսի 6-ին և տևեց ամբողջ 23 օր: Դա այն ժամանակն էր, երբ ռուսաց հաջողակ սրի բախտը Հայաստանում հանկարծ փոխվեցավ: Տեղային մահմեդականությունը, որ սկզբում այնքան հոժարությամբ ընդունեց ռուսաց տիրապետությունը, կրկին ապստամբեցավ և միացավ Սմայիլ փաշայի զորքերի հետ: Գեներալ Տեր-Ղուկասովը, Երևանյան զորաբաժնի հրամանատարը, այդ միջոցում գտնվում էր Ջեյդեգանի և Դալի-Բաբայի մեջ և իր փոքրաթիվ գունդերով քաջությամբ պատերազմում էր Մուխթար փաշայի հինգ անգամ ավելի ուժի դեմ:

... Բայազեդի միջնաբերդը, որպես մի մռայլ կետ, անորոշ կերպով նկարված էր բլուրների բարձրավանդակի վրա: Եվ ամեն կողմից կրակը մաղվում էր այդ կետի վրա, և ամեն կողմից թնդանոթների ռումբերը և հրազենների գնդակները կարկտի նշան թափվում էին այնտեղ: Բերդը մռնչում էր, որպես մի վիթխարի գազան, որին ամեն կողմից հարվածում էին: Մոտ 1000 ռուս զինվորներ, նույն չափով հայ և թուրք կամավորների հետ, կռվում էին Սմայիլ փաշայի քսան հազարի դեմ:

... Պաշարումը այն աստիճան շուտափույթ և անակնկալ կերպով կատարվեցավ, որ բերդի մեջ բավական պաշար վեր առնելու ժամանակ չգտան: Այժմ պաշարվածները ստիպված էին պատերազմել երեք հզոր ոսոխների դեմ, ներսից՝ սովի ու ծարավի դեմ, իսկ դրսից՝ թշնամու կրակի դեմ:

Ամսի 8-ից զինվորները զրկվեցան տաք կերակրից: Բերդապահի ձին և արտիլերիայի ձիաները բոլորը մորթել և կերել էին: Ձիաների գարին մնաց զինվորների համար, որը նույնպես սպառվեցավ: ... Բերդի մեջ ջուր չկար: Բերդից դուրս, 300 քայլ հեռավորության վրա, գտնվում էր մի աղբյուր, որը փակել էին թուրքերը: Ամեն գիշեր փորձում էին ցած իջնել բերդից ջուր բերելու համար, բայց 20-30 գնացողներից շատ անգամ մեկն էլ չէր վերադառնում:

... ամրոցի սենյակներից մեկի մեջ, ուր մի ժամանակ կենում էր օսմանցի բերդապահը, այժմ ռուս բերդապահը, Շտոկվիչը, մի քանի օֆիցերների հետ կազմել էին խորհուրդ: Խորհրդին մասնակցում էին հայ և թուրք միլիցիայի գլխավորները: ...Խորհուրդը վճռեց նամակ գրել Տեր-Ղուկասովին, և քառորդ ժամից հետո բերդապահը, պատրաստ նամակը ձեռին, մյուսների հետ դուրս եկան խորհրդարանից:

Թմբուկի թեթև ձայնը հավաքեց զինվորներին բերդի հրապա-

ռակի վրա: Բերդապահը բարձր ձայնով խոսեց.

- Տղերք, ձեզ հայտնի է մեր դրությունը, այդ մասին խոսելը ավելորդ է: Այժմ մեր հույսը մնացել է Աստծո վրա և նրա հաջողությամբ դրսից գալու օգնության վրա: ... Հիմա ո՞վ կլինի ձեզանից այն քաջը, որ հանձն կառնե կատարել այդ մեծ ծառայությունը, թող մոտենա և ընդունե նամակը: Ես խոստանում եմ, որ նա կստանա մի այնպիսի պարգև, որը վայել է մի անձնազոհ տղամարդի, որ այսքան բազմության ազատության պատճառ է լինելու:

Տիրեց ընդհանուր լռություն, և բազմության միջից ոչ մի ձայն լսելի չեղավ:

- Կրկնում եմ,- շարունակեց բերդապահը ավելի զգալի ձայնով,- որ այս նամակի հետ կապված է մեր ամենի փրկությունը. ո՞վ է ցանկանում վայելել այդ փառքը և մեր բոլորի ազատիչը լինել:

Դարձյալ ոչ մի ձայն լսելի չեղավ:

- Միթե ձեր մեջ չկա՞ սիրտ ունեցող մի տղամարդ,- գոչեց նա դողդոջուն ձայնով,- ո՞վ է հանձն առնում տանել նամակը:

- Ես,- լսելի եղավ բազմության միջից մի ձայն, և մի հայ երիտասարդ մոտեցավ, ընդունեց նամակը:

*Այս երիտասարդը Վարդանն էր:**

(* Երիտասարդի անունը Սամփսոն էր, բայց ես իմ վեպի հերոսից ստեղծեցի մի առանձին տիպ. դրանով թեև փոքր-ինչ շեղվեցա պատմական ճշտությունից, բայց թող ներվի ինձ, եթե ես իսկությունը մասնավորապես զոհել եմ բանաստեղծական ազատությանը: **Ռաֆֆի**):

Բ

...Պաշարումը հետզհետե սաստկանում էր: Սար, ծոր, բլուր, դաշտ և տափարակ պատած էր բաշիբոզուկների բազմաթիվ, միևնույն ժամանակ խառնափնթոր, հրոսակներով: Բանակները զետեղված էին առանձին խումբերով, և յուրաքանչյուր խումբի մեջ տեսնվում էր շարժում, իրարանցում և աղմուկ: Կրոնական մոլեռանդությունը, խառնված զինվորական անգթության հետ, անցնում էր բարբարոսության ամեն չափից և սահմանից: Մարդը, գազան դարձած, կեղեքում էր, մահացնում էր իր նմաններին:

... Բայց մի տեղ ամբողջ բանակի ուշադրությունը գրավել էր մի մարդ: Նա երբեմն թռչկոտելով, երբեմն ծափ տալով, անցնում էր բանակի միջից և միևնույն ժամանակ եղանակում էր մի այսպիսի հիմար քրդերեն երգ.

Պառավ տատը գորտ դարձավ,
Գորտ դարձավ, ծովը մտավ,
Ծովից ավազ դուրս հանեց,
Ավազը ոսկի դարձավ,

Ոսկին տվեց մի այծ առեց,
Կաղլիկ, քոսոտ այծ առեց:
- Այծիկ, այծիկ, ջան այծիկ,
Ասա, ի՞նչու դու եղար
Այսպես քոսոտ ու կաղլիկ...

Խե~նքը ... ձայն էին տալիս ամեն կողմից քրդերը և, հավաքվելով նրա շուրջը, ստիպում էին կրկնել իր երգը:

Եվ իրավ, այդ մարդը խենթ էր, կամ գոնե այսպես ձևացնում էր իրան: Նա հագնված էր այն կերպով, որպես հագնվում են մեզ մոտ լարախաղացների օգնականները, որոնց կոչում են «տակի մասխարա», և որոնք լարի ներքևում զանազան տեսակ խեղկատակություններով ծիծաղեցնում են հանդիսականներին: Նույնն անում էր և այդ խենթը: Նա մի բարձրահասակ երիտասարդ էր՝ վայրենի դեմքով, գլխին դրած ուներ հին թաղիքի կտորից անշնորհք կերպով կարած մի երկայն գդակ, որ վերջանում էր քառանկյունի ձևով, և յուրաքանչյուր անկյունից քարշ էին ընկած միմի փոքրիկ զանգակներ, որոնք նրա ամեն մի շարժմունքից զնգզնգում էին և աններդաշնակ ձայներ էին հանում: Երեսը մրոտած էր կոշկաներկով, որի վրա զանազան ուղղությամբ քաշված էին զանազան գույներով գծեր՝ կարմիր, դեղին, կապույտ և այլն: Բացի գդակից, ամբողջ հագուստը մի կտորից էր բաղկացած. դա գինվորի քրքրված մի վերարկու էր, որի մեջ փաթաթված էր նա բոլորովին մերկ մարմնով: Մեջքը պնդած էր մի թոկի կտորով, որ գոտիի տեղ էր ծառայում: Ոտքերը բոբիկ էին, ոտնամաններ չուներ:

- Ապա էշի նման մեկ զռա,- ասում էին նրան:

... -Դու, երևի, արջի նման պարել ևս գիտես,- ասում էին նրան,- ապա տեսնենք քո հունարը:

Խենթը սկսում էր զանազան աճոռնի շարժմունքներ անել, չորս թաթիկների վրա սողալ, ոտները բարձրացնել, ձեռքերի վրա կանգնել և ուրիշ տեսակ-տեսակ հիմարություններ անել:

Մի ամբողջ օր խենթը մնաց քրդերի բանակի մեջ. զվարճացնում էր բոլորին, խոսում էր քրդերեն որպես քուրդ, հայհոյում էր, անիծում էր ռուսներին, գոռում և գոչում էր, թե բոլոր «գավուրներին» պետք է կոտորել: Մինչև կեսգիշեր նրա ձայնը ամեն կողմից լսելի էր լինում: Բայց մյուս առավոտյան խենթին բանակի մեջ ոչ ոք չտեսավ:

Գ

... Բայազեդից դեպի Ալաշկերտի կողմերը տանող ճանապարհով միայնակ գնում էր մի մարդ: ... Ուղևորը մի երիտասարդ էր, համարյա միևնույն կերպարանքով, որպես հագնված էր նախընթաց գիշերում խենթը:

Դ

... մի ծիավոր, քրդի ձևով հագնված, ծտի նման սլանալով մտավ Տեր-Ղուկասովի բանակը: Նա հայտնեց, թե գեներալի անունով շատ կարևոր նամակ ունի բերած: Նրան տարան դեպի գեներալի վրանը: Մի օֆիցերի ձեռքով նամակը ներս ուղարկեց նա, իսկ ինքը վրանի դրսումը սպասում էր, հոգ տանելով իր ձիուն, որ շատ քրտնած էր: Մի քանի րոպեից նրան ներս կանչեցին:

Վրանի մեջ նստած էր միջահասակ մի զինվորական, լիքը կազմվածքով և առյուծի խրոխտ դեմքով: Դա ինքը՝ Տեր-Ղուկասովն էր: ...Նա դարձավ դեպի նամակաբերը, հարցնելով.

- Դու հա՞յ ես:

- Բացի հայ լինելս, տերտերի տղա եմ,- պատասխանեց երիտասարդը:

- Բերդում հաց կա՞ր:

- Մի քանի օրից հետո կսկսեն մեկմեկու միս ուտել, եթե չէին ցանկանա քաղցած մեռնել:

- Ջուրը ինչպե՞ս է:

- Չկա: Պետք է դրսից բերել տալ. ցերեկով դուրս գալու հնար չկա:

- Հրազենների պաշարը ի՞նչպես է, վառոդ, գնդակ ունե՞ն:

- Սպառվել էր: Բայց մի հայ, էլի մեր հայերի երեսը թող սպիտակ լինի, գտավ բերդի մեջ թուրքերից թաքցրած բավական զենքեր, վառոդ և գնդակ, հիմա նրանցով յոլա են գնում:

- Դու ի՞նչպես կարողացար դուրս գալ բերդից:

- Առավոտյան, դեռ արևը չծագած, պարսպից ցած իջա և ուղիղ մտա քրդերի բանակի մեջ: Մի ամբողջ օր նրանց ծիծաղացրի, ուրախացրի, երգեցի, պար եկա և հազար տեսակ օյիններ հանեցի, և այսպես ամեն տեղ մտա, ամեն բան իմացա, հետո, մնաք բարով ասելով, հեռացա:

Եվ նա սկսեց նկարագրել իր հագուստը և այն բոլոր ծաղրական ձևերը, որով հայտնվեցավ քրդերի բանակի մեջ:

Գեներալի սառն դեմքի վրա անցավ մի թեթև ժպիտ, և նա ընկերաբար հարցրեց.

- Իսկ այդ հագուստը դու ո՞րտեղից գտար:

- Աստված հասցրուց: Ճանապարհին մի քուրդ գտա, այդ հագուստը, այդ զենքերը և այն սիրուն ձին, որ դրսումը կանգնած է, նրանից խլեցի,- պատասխանեց երիտասարդը, իր սովորական եղանակով պատմելով, թե ինչ հնարքով կարողացավ սպանել քրդին:

- Դու քաջ տղա ես երևում,- ասաց գեներալը և, կրկին ընդունելով իր առաջվա մտախոհ կերպարանքը, շարունակեց հարցուփորձը:

- Շա՞տ են քրդերը:

- Ասում են, քսան հազարից ավելի են, բայց բոլորը քրդեր չեն, նրանց մեջ խառն են ամեն տեսակ մահմեդական ցեղեր, ով որ մի քանի կտոր զենք է ունեցել և մի ձի, վազ է տվել դեպի Բայազեդ, և այսպես կազմվել է մի ահագին բազմություն: Ես ճանապարհին տեսնում էի, թե ինչպես դիմում են այնտեղ միշտ նոր և նոր խումբեր:

- Թնդանոթներ ունե՞ն:

- Ունեն:

- Ի՞նչ դիտավորություն ունեն:

- Շտապում են Բայազեդի բերդը առնել, հետո անցնել Երևան և մի շաբաթից հետո Թիֆլիսում լինել, որովհետև սիրուն վրացուհիները և հայոց աղջիկ-պարոնները սաստիկ հետաքրքրում են նրանց:

Գեներալի դեմքի վրա դարձյալ երևաց ժպիտի նման մի բան, և նա արհամարհական կերպով հարցրեց.

- Քսան հազարո՞վ պիտի Թիֆլիս գնան: Այդ լինել չէ կարող...

- Քսան հազարը քիչ չէ, տեր, երբ առջևում հազար հատ սալդաթ չկա. բացի դրանից, շուտով կմիանան նրանց հետ Սմայիլ փաշայի բոլոր զորքերը: Իսկ մեր կողմերի մահմեդականները, գրկները բացած, անհամբերությամբ սպասում են իրանց կրոնակից հյուրերին:

- Բայազեդի քաղաքը մտա՞ր:

- Մտա: Հայ-քրիստոնյայի մի շունչ անգամ չէ մնացել, ծերերին, պառավներին և երեխաներին կոտորեցին, լավ-լավ ջահել կնիկներին, աղջիկներին և պատանիներին գերի տարան, տները այրեցին, և ինչ որ ունեին՝ կողոպտեցին: Մի հարյուրի չափ ընտանիք միայն, որոնք առաջուց գիտեին, թե ինչ վտանգ է սպառնում Բայազեդին, դեռ քրդերը չեկած, փախան գնացին սահմանակից պարսից Մակու քաղաքը: Բայց դրանք էլ միայն իրանց գլուխը կարողացան ազատել, կայքերը թողեցին թշնամու ձեռքը: Ախ, այդ մահմեդականները որքան անգութ, որքան անազնիվ կերպով վարվեցան հայերի հետ...

... Գեներալը լուռ լսում էր: Երիտասարդը շարունակեց.

- Ախ, եթե գիտենայիք, թե որքան լավ տղամարդիկ փչացան այն կռվի մեջ, որ մենք ունեցանք քրդերի հետ նախքան Բայազեդը նրանց ձեռքը տալը: Որպես ձեզ հայտնի է, տեր, բերդի պահպանության համար թողած էին խիստ փոքր թվով ռուս զինվորներ, հայ և թուրք միլիցիայի հետ: Շտոկվիչը, Բայազեդի այդ հերոսը, ռուս զինվորներով պահպանում էր բերդը, իսկ միլիցիան պահպանում էր քաղաքը: Մեզ վաղուց լուրեր էին հասնում, թե ահագին բազմություն քուրդերի, շեյխ Ջալալեդդինի և շեյխ Իբադուլլահի գլխավորությամբ դիմում են դեպի Բայազեդ: Այդ լուրերը հաղորդում էին մեզ վանեցի հայերը: Մենք շտապեցինք, պա-

հանջելով, որ վաղորոք բերող ամրացնեին, և մեզ մոտ պատրաստվեին բավականաչափ ուժեր թշնամու առաջն առնելու համար: Բայց գտնվեցան այնպիսիները, որ աշխատում էին հավատացնել, թե այդ բոլոր լուրերը սուտ են, թե ոչինչ պատրաստություն պետք չէ: Թե ի՞նչ նպատակով այդ դավաճանները աշխատում էին մեզ անպատրաստ վիճակի մեջ պահել թշնամուն հանդիպելու ժամանակ, այդ ես չեմ կարող ասել, դուք, իհարկե, վերջը կտեղեկանաք, գեներալ, միայն այսքանը կասեմ, որ հայը եղել է միշտ հավատարիմ և կլինի:

Որպես երևում էր, երիտասարդի պատմության մեջ կային այնպիսի կետեր, որ նա դժվարանում էր պարզապես արտահայտել: Գեներալը ընդմիջեց նրա խոսքը, ասելով.

- Դու այն պատմիր, թե ինչ արեցիք քրդերի գալուց հետո:

... Երիտասարդը, զսպելով իր շատախոսությունը, որ առաջ էր գալիս նրա սրտի վրա ծանրացած, տխուր անցքերի տպավորություններից, շարունակեց.

- Գուցե մեզ կհաջողվեր, տեղային բոլոր հայերի հետ միանալով, ազատել քաղաքը, եթե առաջուց կտային նրանց բավականաչափ զենքեր: Բայց զենքեր չստացան նրանք: Այնուամենայնիվ շատերը միացան մեզ հետ: Կռիվը սկզբում, ճշմարիտ ասած, փառավոր էր: Մի փոքրիկ խումբ պատերազմում էր թվով անհամեմատ ուժի դեմ: Մեզ հետ մասնակցում էին կռվում և մի քանի հարյուր թուրք կամավորներ: Բայց հանկարծ տեսանք, որ մեր մահմեդական ընկերները թողեցին կռվի դաշտը և սկսեցին փախչել: Կարծես նրանց շատ ախորժելի չէր գնդակներ արձակել իրանց կրոնակիցների դեմ... Մենք, հայերս, մնացինք մենակ և երկար համառությամբ պաշտպանվում էինք: Այդ տևեց մի քանի ժամ, մինչև մեր հրազենների պաշարը սպառվեցավ: Այն ժամանակ սկսվեցավ ձեռնամերձ կռիվը: Շատերը ընկան, շատերը գերի բռնվեցան, և մնացածները, տեսնելով, որ ամեն ջանքեր իզուր են, թողեցին և փախան: Այն ժամանակ թշնամին տիրեց քաղաքին:

- Հասկանալի է...,- ասաց ինքն իրան գեներալը և վեր կենալով մոտեցավ մի փոքրիկ արկղիկի և, նրա միջից դուրս բերելով մի խաչ, իր ձեռքով կախեց երիտասարդի կուրծքի վրա, ասելով.

- Դու արժանի ես դրան, ես կառաջարկեմ իշխանությանը, բացի դրանից, քեզ համար աստիճան և ռոճիկ: Դու այսուհետ կմնաս ինձ մոտ, քեզ նման քաջերը պետք են ինձ:

Ռաֆֆի, Երկերի ժողովածու,
հատոր չորրորդ, Ե., 1984, էջ 149-169:

Հեղինակի կողմից

Ռաֆֆու «Խենթը» վեպի այս ամբողջ գլուխը փոքրիկ հապավումներով մեջ ենք բերում, քանի որ վեպի այս հատվածի հերոս Վարդանի կերպավորող-նախատիպը բացարձակ իրական անձնավորություն է և ծնվել է պատմական Նիգ-Ապարանի Արագյուղ բնակավայրում ու անունն էլ եղել է Սամսոն Տեր-Պողոսյան:

Տեր-Պողոսյանների (Պետրոսյանների) տոհմը էջմիածնի գավառի Ապարանի գավառամասի Արագյուղ բնակավայրում հաստատվել է 1828 թվականի ուշ աշնանը: Տոհմը սերում է Բայազեդի շրջանի Արծափ գյուղից:* Այդ գերդաստանից Տեր Հովհաննեսի որդիներ Պետրոսը (Պետրոսյաններ) և Տեր-Պողոսը (Տեր-Պողոսյաններ, Պողոսյաններ) հաստատվել են Ապարանի գավառամասի Արագյուղ գյուղում**, մյուս՝ Իսպիրյանների, Սարգսյանների ճյուղերը՝ Մարտունու շրջանի Լիճք գյուղում:

*) *Արծափ բերդավանը (գյուղը) գտնվել է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Կոգովիտ գավառում, Դարոյնքից հյուսիս-արևմուտք, Արծափաքար լեռան ստորոտին, Արծափ գետակի ափին, Իգդիրից Հին Բայազեդ տանող ճանապարհի աջ կողմում, լեռնանցքի մոտ: Արծափը շրջապատված է եղել պարիսպներով: Պարսպի ներսում են եղել Սուրբ Գրիգոր ավերակ վանքը և Ծաղկավանքը (կանգուն է եղել մինչև 1910-ական թվականները): Առաջին անգամ հիշատակվում է 6-րդ դարի վերջին կամ 7-րդ դարի սկզբին Հայոց կաթողիկոս Աբրահամ Ա Աղբաթանեցու օրոք, Դվինում հրավիրված ժողովի առիթով: Պատմիչ Սեբեոսի վկայությամբ 643 թվականին Արծափի մոտ Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին հայկական փոքրաթիվ զորաջոկատով ոչնչացրել է բերդը գրաված արաբական 3000-անոց բանակին: Դրանից ուր հարյուր տարի անց Արծափը դարձյալ հիշվել է որպես ամուր բերդ (բերդավան): 19-րդ դարի վերջերին մտել է Էրզրումի նահանգի Բայազեդի գավառի վարչական տարածքի մեջ: Ունեցել է բերդի հողեր, առատ ջուր և արևոտ լեռնալանջեր: Գյուղում գործել է վարժարան: 1829 թվականին շատ արծափցիներ հաստատվել են Արևելյան Հայաստանի Ապարանի գավառամասի Արագյուղ, Սևանի ավազանի Ծովագյուղ, Մեղրաձոր, Լիճք գյուղերում: 1877 թվականին Արծափի բերդը գրավել է գեներալ-լեյտենանտ Արզաս Տեր-Ղուկասովը: 1909 թվականին Արծափն ունեցել է 120 տուն հայ բնակիչ: Նրանք զբաղվել են հողագործությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ, արհեստով՝ բրուտագործությամբ: 1914 թվականին գյուղից հեռացել են հայերի վերջին 100 ընտանիքները)*:

**) *Արագյուղ բնակավայրը պատմականորեն եղել է Նիգ-Ապարանի գավառի, 1829-1930 թվականներին՝ Էջմիածնի գավառի Ապարանի գավառամասի կազմում, 1930 թվականից՝ Աշտարակի, 1978 թվականից՝ Նաիրիի շրջանների կազմում: Գյուղը գտնվում է Արայի լեռան հարավարևելյան ստորոտին, սևահողային սարահարթի վրա: Ունի առողջարար, մաքուր օդ, սառնորակ ջուր: Գյուղը գտնվում է խնձորենու, տանձենու, սալորենու, ընկուզենու այգիների մեջ: Գյուղի ներկայիս բնակիչների նախնիները եկել են Բայազեդի շրջանի Արծափ գյուղից, Կարսից, Իգդիրից: 1831 թվականին գյուղում բնակվել է 162, 1886 թվականին՝ 699, 1914 թվականին՝ 1005, 1922 թվականին՝ 847, 1959 թվականին՝ 811, 1970 թվականին՝ 724, 1979 թվականին՝ 733 հայ բնակիչ: Գյուղում առաջին դպրոցը 1890 թվականին հիմնել է Սամսոն Տեր-Պողոսյանը: Այժմ գյուղում գործում է մեկ ութամյա, մեկ միջնակարգ դպրոց, բուժկետ, ալրաղաց: Գյուղը հին բնակավայր է: Գյուղում կան երեք եկեղեցիներ՝ Թուխ Մանուկ, Մարիամ Աստվածածին և Անանուն: Եկեղեցիներից երկուսը 5-6-րդ դարերի եռանավ բազիլիկներ են, բազմիցս քանդվել ու վերաշինվել են: 1840-ական թվականներին գյուղի եկեղեցին կոչվել է Սուրբ Աստվածածին: Գյուղից հյուսիս, ձորալանջին պահպանվել են երեք այլ բնակավայրերի ավերակները)*:

1851 թվականին Արագյուղում է ծնվել Սամսոն Տեր-Պողոսյանը, որ դարձել է Ռաֆֆու «Խենթը» վեպի հերոս Վարդանի նախատիպը:

Նրա որդիներից և տոհմի նշանավոր ներկայացուցիչներից է Արսեն Տեր-Պողոսյանը: Նա դարձել է Ապարանի հերոսամարտի կազմակերպիչներից մեկը: Սամսոնի մյուս որդին՝ Վասակը եղել է ՀԽՍՀ ֆինանսների ժողովրդական կոմիսար:

Արսեն Տեր-Պողոսյանի եղբայրներից Հումբերտը ավարտել է մանկավարժական ինստիտուտը, աշխատել ուսուցիչ: Մասնակցել է խորհրդային Հայրենական մեծ պատերազմին: Մահացել է 1943 թվականին:

Մյուս եղբայրը՝ Պավելը, և քույրը՝ Խենթուշը, ժառանգ չեն ունեցել:

Արսեն Տեր-Պողոսյանի որդի Սամսոնը ստացել է ճարտարագիտական կրթություն, Տամբով քաղաքում եղել է գործարանի գլխավոր ճարտարագետ, ապա՝ տնօրեն:

1974 թվականին Արագյուղ գյուղի գերեզմանոցի սկզբնամասում տեղադրվել է «Խենթի»՝ Սամսոն Տեր Պողոսի Տեր-Պողոսյանի կիսանդրին:

Ռաֆֆու «Խենթը» վեպի «Բայազեդը պաշարված էր» գլխից հետո ներկայացված մասի Վարդան անունով հերոսն արդեն ոչ մի կապ չունի Սամսոն Տեր-Պողոսյանի հետ և մեծ գրողի գեղարվեստական մտածողության արդյունքն է:

Սամսոն Տեր-Պողոսյանը 1877 թվականի հունիսի 6-ից եղել է Բայազեդի բերդում, մասնակցել է բերդի պաշտպանության համար մղված մարտերին և, երբ վիճակը դարձել է օրհասական, ու անհրաժեշտ է եղել նամակ-խնդրագիր հասցնել ռուսական Կովկասյան զորաբանակի Երևանյան ջոկատի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Արզաս Տեր-Ղուկասովին, ստանձնել է այդ անհնարին պարտականությունը և առասպելական հնարամտությամբ, խենթի դեր խաղալով, կարողացել է անցնել քրդերի ու թուրքերի զորաբանակի շղթայի միջով և օգնության խնդրագիրը հասցնել գեներալին փրկելով Բայազեդում ներփակված զինվորներին ու մարդկանց վերահաս ոչնչացումից:

Մեծ պատմավիպասանը 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի և հայերի նոր գաղթականության մասին նյութ է փնտրել և պատրաստվել է վիպական գործ ստեղծել այդ թեմայով: 1877 թվականի սեպտեմբերի սկզբներին Թիֆլիսից Երևան ճանապարհվելիս Դիլիջանի անտառում հանդիպել է Բայազեդի պաշտպանությանը մասնակցած վիրավոր զինվորների, որոնցից մեկը պատմել է, որ իրենք փրկվել են մի ***ապարանցի*** զինվորի հնարամտության շնորհիվ, որ լավ քրդերեն է իմացել և քուրդ ու խենթ ձևանալով ճեղքել է քրդերի շղթան ու լուր հասցրել գեներալ Տեր-Ղուկասովին: *Դեպքն այնքան զգայացունց է եղել, որ ապագա վեպի մտորումների մեջ այդ դրվագը և Սամսոն Տեր-Պողոսյանի կերպարը ամենայն մանրամասնությամբ դարձել է գլխավոր թեմա*: Ռաֆֆին ցանկացել է անձամբ հանդիպել Սամսոն Տեր-Պողոսյանի հետ: Նրանց հանդիպումը տեղի է ունեցել Վաղարշապատում 1878 թվականի հունիսի սկզբներին: Սամսոն Տեր-Պողոսյանը այդ հանդիպման մասին պատմել է. «Ես ինչ-որ հանձնարարականով Էջմիածին էի եկել, երբ կապույտ ակնոցներով, մեծ սև բեղերով մի ինչ-որ մարդ առաջս կտրեց, ծանոթացավ, անվանելով իրեն Մելիք-Հակոբյան, և ասելով, որ ինձ հետ կարևոր խոսակցություն ունի, տարավ միաբաններից մեկի խուցը և ահա այստեղ սկսեց ինձ հարցուփորձի ենթարկել իմ մի տարի առաջ Բայազեդում և գեներալ Տեր-Ղուկասովի բանակում արածների մասին: Ես ամեն կերպ աշխատում էի

կարճ կապել, բայց այս մարդը յախիցս բռնել, պոկ չէր գալիս, հարցեր էր, որ տալիս էր և ասածներս գրում իր ծոցատետրում: Այդ պահին ներս եկավ բժիշկ Բագրատ Նավասարդյանը, որ գաղթականներին բուժող ու խնամող վանքի բժիշկն էր, և կամացուկ ասաց ականջիս՝ սա մեր հայտնի գրող Ռաֆֆին է. մանրամասն պատմիր, նա, կարծես, ինչ-որ բան է ուզում գրել այդ պատերազմի մասին: Եվ ես սկսեցի պատմել ու պատասխանել նրա տված հարցերին, որից հետո դուրս եկա ու գնացի իմ գործին» (***Ռաֆֆի, Երկերի ժողովածու***, *հատոր չորրորդ, Ե., 1984, էջ 445-446, նաև տես Գրականության և արվեստի թանգարան, չմշակված նյութեր, Ն.Աթանեսյանի ֆոնդ*):

Փաստորեն այս հանդիպումից հետո վաղօրոք հղացած վեպը ստացել է անուն՝ «Խենթը» և Սամսոն Տեր-Պողոսյանը գրական Վարդան անունով դարձել է վերը նկարագրված «Բայազեդը պաշարված էր» դրվագի գլխավոր հերոսը:

Այս դրվագն իր «Բայազեդ» վեպում նկարագրում է նաև ռուս գրող Պիկուլը:

Այս Սամսոն Տեր-Պողոսյանի որդին՝ Արսեն Տեր-Պողոսյանը 1918 թվականի մայիսի 22-29-ին դարձել է Արագած սարի ստորոտում, Ապարանի մոտ թուրքական կանոնավոր զորաբանակի դեմ ծավալված հերոսամարտի կազմակերպիչներից մեկը և աշխարհազորի հրամանատարը:

Տեր-Պողոսյան գերդաստանի այս երկու մեծ ներկայացուցիչներից բացի այդ ընտանիքում ծնվել ու մեծացել են նաև այլ Տեր-Պողոսյաններ, որոնք հետք են թողել Արագյուղի, Ապարանի շրջանի, ինչու չէ նաև Հայաստանի պատմության մեջ:

Տեր-Պողոսյանների տոհմին նվիրված այս գրքին էլ Սամսոն Տեր-Պողոսյանի գրական մարմնավորման՝ «Խենթի» անունով տվել ենք «Խենթերը» վերնագիրը:

Գրքում ներկայացվում են Տեր-Պողոսյան (Պողոսյան) տոհմի հայտնի անդամների կենսագրությունները, առաջին անգամ հրատարակվում են ռուսների կողմից անցկացված մարդահամարների Տեր-Պողոսյաններին վերաբերող ցուցակները, թոռ Սամսոն Արսենի Տեր-Պողոսյանի նամակները, տոհմի ներկայացուցիչների լուսանկարները, «Խենթը» վեպի հրատարակությունների մատենագիտությունը:

Հանրագիտակ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՎԵՏԻՔ ՆԻԿՈԼԻ, Ապարանի հերոսամարտի մասնակից:

Ծնվել է Ապարանի գավառամասի Արագյուղ գյուղում: *Սերում է Տեր-Պողոս քահանայի Գրիգոր որդու գերդաստանից*:

1917-1920 թվականներին եղել է Արսեն Տեր-Պողոսյանի թիկնապահ ջոկատում: Մասնակցել է Արսենի մասնակցությամբ բոլոր մարտական գործողություններին: Քաջաբար է կռվել Ապարանի հերոսամարտի օրերին: Հրամանատարության կողմից արժանացել է խաչի:

Պողոսյան Ալբերտ Վանուշի

ՊՈՂՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ ՎԱՆՈՒՇԻ, տնտեսական աշխատող, տնօրեն, Ապարանի շրջանի Եղիպատրուշ գյուղի պատվավոր գյուղացի (1990 թ.):

Ծնվել է 1937 թվականին, Նաիրիի շրջանի Արագյուղ գյուղում: *Սերում է Տեր-Պողոս քահանայի Հովհաննես որդու գերդաստանից (Վաղարշակի Վանուշ որդու տոհմ է)*:

1954 թվականին ավարտել է Արա գյուղի միջնակարգ դպրոցը, 1960 թվականին՝ Երևանի հաստոցաշինական տեխնիկումը, 1970 թվականին՝ Երևանի պետական ճարտարագիտական ինստիտուտը:

1956-1959 թվականներին ծառայել է խորհրդային բանակում:

1955-1956 և 1959-1972 թվականներին եղել է Երևանի հաստոցաշինական գործարանի փականագործի աշակերտ, փականագործ, արտադրամասի պետ, 1972-1976 թվականներին՝ Երևանի «Նիտիմ» գործարանի գլխավոր մեխանիկ, 1976-1977 թվականներին՝ «Էրեբունի» միավորման Էջմիածնի գործարանի գլխավոր մեխանիկ, 1977-1986 թվականներին՝ Էջմիածնի գործարանի տնօրենի ընդհանուր գծով տեղակալ և միավորման գլխավոր տնօրենի տեղակալ, 1983-1993 թվականներին՝ «Էրեբունի» միավորման Ապարա-

Պողոսյան Վանուշ Ալբերտի

նի «Նիգ» գործարանի տնօրեն, 1993-1999 թվականներին՝ ՀՀ արդյունաբերության նախարարության բազայի տնօրեն:

1999 թվականին նշանակվել է Երևանի «Գառն-Լեռ» միավորման գլխավոր ճարտարագետի տեղակալ:

1983-1990 թվականներին եղել է Ապարանի շրջխորհրդի պատգամավոր:

1990-1992 թվականներին մասնակցություն է ունեցել Արցախի ժողովրդի օգնության գործին: 1992 թվականին անձամբ Գյումրիի օդանավակայանից երեք ինքնաթիռ սննդամթերք է հասցրել շրջափակված Ստեփանակերտ:

Որդին՝ **Վանուշը** (ծնվել է 1967 թ-ի նոյեմբերի 7-ին) 1990 թվականին ավարտել է Երևանի պետական ճարտարուգիտական ինստիտուտի մեխֆակը: 1990 թ-ից աշխատում է «Էրեբունի» միավորման գլխամասային վարչապարատի բաժնի պետ:

Դուստրը **Գայանեն** (ծնվել է 1964 թ-ին) ավարտել է Երևանի պետական ճարտարագիտական ինստիտուտի էլեկտրո ֆակուլտետը: 1976 թվականին նշանակվել է «Էրեբունի» միավորման գլխամասային վարչապարատի ճարտարագետ:

Դուստրը **Արմինեն** (ծնվել է 1976 թ-ին) 1998 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 2005 թվականին ծառայության է անցել ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ակադեմիայում: Ստացել է ենթասպայի կոչում:

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՄԲԵՐԹ ԱՐՄԵՆԻ, մանկավարժ, խորհրդային Հայրենական մեծ պատերազմի մասնակից:

Ծնվել է 1901 թվականին, Երևան քաղաքում, Էջմիածնի գավառի Ապարանի գավառամասի Արագյուղ գյուղի վերաբնակչի ընտանիքում (Խենթի՝ Սամսոն Տեր-Պողոսյանի երկրորդ կնոջ՝ Սրբուհու որդին է, Արսեն և Վասակ Տեր-Պողոսյանների եղբայրը):

1937 թվականին ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը:

1937-1940 թվականներին եղել է Աբովյանի շրջանի Ողջաբերդ, 1941-1942 թվականներին՝ նույն շրջանի Գեղաղիր և Ձորաղբյուր գյուղերի դպրոցների ուսուցիչ:

1942-1943 թվականներին ծառայել է խորհրդային բանակում: Մասնակցել է խորհրդային Հայրենական մեծ պատերազմին: 1943 թվականի սկզբին հիվանդության պատճառով փոխադրվել է Երևան քաղաքի հոսպիտալը: Մահացել է 1943 թվականի մարտի 17-ին և թաղվել Թոխմախի խորհրդային զինվորների եղբայրական գերեզմանոցում:

ՊՈՂՈՍՅԱՆ ՅՈՒՐԱ ՄՅԱՄՆԻԿԻ, գործարար:

Ծնվել է 1954 թվականին, Երևան քաղաքում, *Տեր-Պողոսյանների տոհմում*:

1988 թվականին ավարտել է Երևանի պետական ճարտարագիտական ինստիտուտի մեխֆակը:

Եղել է ՀԽՍՀ պետական մատակարարման վարչության բաժնի պետ:

1997 թվականին հաստատվել է ԱՄՆ-ում:

Պողոսյան Հումբերթ Արսենի

ՊՈՂՈՍՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ ՀՈՒՄԲԵՐԹԻ, ճարտարագետ-մեխանիկ:

Ծնվել է 1943 թվականի փետրվարի 16-ին, Աբովյանի շրջանի Ողջաբերդ գյուղում, Հումբերթ Տեր-Պողոսյանի ընտանիքում: 1945 թվականին մոր հետ հաստատվել է Էջմիածին քաղաքում:

1959 թվականին ավարտել է Էջմիածնի Հովհաննես Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոցը, 1965 թվականին՝ Երևանի ավտոճանապարհային տեխնիկումը, 1978 թվականին՝ Երևանի պետական ճարտարագիտական ինստիտուտի մեխանիկական ֆակուլտետի երեկոյան բաժինը:

1965-1968 թվականներին ծառայել է խորհրդային բանակում:

1968-1970 թվականներին եղել է Էջմիածնի պլաստմասսաների գործարանի արտադրամասի վարպետ: 1970 թվականին աշխատանքի է անցել Էջմիածնի «Ռաստր գործարան» բաց բաժնետիրական ընկերությունում (նախկինում Ռաստր գործարան): Եղել է վարպետ, ավագ ճարտարագետ, կոնստրուկտոր, ներկայումս՝ գլխավոր մեխանիկի և էներգետիկի բաժնի պետ:

Բազմիցս արժանացել է սոցմրցման հաղթողի կրծքանշանի:

Դուստրը՝ **Հեղինեն** (ծնվել է 1971 թվականին) ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և աշխատում է Էջմիածնի թիվ 3 միջնակարգ դպրոցում:

Պողոսյան Ռաֆայել Հումբերթի

Պողոսյան Տիգրան Վաղինակի

ՊՈՂՈՍՅԱՆ ՄԱՄՎԵԼ ՎԲՈՒՅԲԻ, ֆուտբոլիստ, սպորտի վարպետ:

Ծնվել է 1959 թվականի դեկտեմբերի 13-ին, Երևան քաղաքում, *Տեր-Պողոսյանների տոհմում*:

Ավարտել է Հայկական պետական ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի մանկավարժական բաժինը:

1977-1986 թվականներին խաղացել է Երևանի «Արարատ» ֆուտբոլային թիմում:

1990 թվականին նշանակվել է «Բանանց» ֆուտբոլային ակումբի պատանեկան հավաքականի մարզիչ:

ՊՈՂՈՍՅԱՆ ՄԵՐԳԵՅ ՎԱԶԳԵՆԻ, գլխավոր մեխանիկ:

Ծնվել է 1955 թվականին, Երևան քաղաքում, *Տեր-Պողոսյանների տոհմում*:

1988 թվականին ավարտել է Երևանի պետական ճարտարագիտական ինստիտուտի մեխֆակը:

1990-1996 թվականներին եղել է Երևանի «Օրբիտա» գործարանի գլխավոր մեխանիկ:

ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՎԱՂԻՆԱԿԻ, Արցախյան ազատամարտի մասնակից:

Ծնվել է 1964 թվականի հոկտեմբերի 25-ին, Երևան քաղաքում, *Տեր-Պողոսյանների տոհմում*:

1981 թվականին ավարտել է Երևանի թիվ 80 միջնակարգ դպրոցը, 1991 թվականին՝ Երևանի պետական ճարտարագիտական ինստիտուտը:

1982-1984 թվականներին ծառայել է խորհրդային բանակում:

Աշխատել է Երևանի հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում, Երևանի «Արաբկիր» կահույքի ֆաբրիկայում:

1992 թվականին կամավոր մասնակցել է Մարտակերտի շրջանի Մեծշեն գյուղի պաշտպանական մարտերին:

ՏԵՐ-ՊՈՂՈՍ որդի ՀՈՎՀԱՆՆԵՍԻ, Հայ Առաքելական եկեղեցու քահանա:

Ծնվել է Ապարանի տարածաշրջանի Արագյուղ գյուղում: *Տեր Պողոս ծխատեր քահանայի ավագ որդու՝ Հովհաննեսի տղան է*:

Նրա մասին կենսագրական տեղեկություններ չեն պահպանվել: Հայտնի է միայն, որ 1910 թվականին ձեռնադրվել է Արագյուղ գյուղի քահանա:

Ունեցել է հինգ որդի Տիգրան, Վանուշ, Գուրգեն, Վիրաբ, Բաբգեն անուններով:

Մահացել է 1911 թվականին:

ՏԵՐ-ՊՈՂՈՍ որդի ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԵՍԻ, Հայ Առաքելական եկեղեցու ծխատեր քահանա:

Ծնվել է 1803 թվականին:

1828 թվականի աշնանը գաղթել է հայրենի Բայազեղի գավառից և ընտանիքով հաստատվել Ապարանի տարածաշրջանի Արագյուղ գյուղում՝ դառնալով Տեր-Պողոսյան տոհմի նահապետը և ազգանվանադիրը:

Ունեցել է չորս որդի՝ Հովհաննես (ծնվել է 1821 թ-ին), Գրիգոր (ծնվել է 1829 թ-ին), Կարապետ (ծնվել է 1841 թ-ին), Սամսոն (ծնվել է 1851 թ-ին) և երկու դուստր՝ Սոֆյա (ծն. 1846 թ-ին, 1862 թ-ի դեկտեմբերի 1-ին ամուսնացել է կարբեցի Հայրապետ Խաչատրյանի հետ) և Մեյրի (ծն. 1852 թ-ին, 1868 թ-ի փետրվարի 6-ին ամուսնացել է համագյուղացի Մինաս Գևորգյանի հետ, մահացել է 1895 թ-ին) անուններով:

1840-1884 թվականներին եղել է Արագյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցու ծխատեր քահանա: Եկեղեցուն կից ծխական դպրոցում կրթել է գյուղի պատանիներին:

Մահացել է 1884 թվականի հուլիսի 24-ին և ամսի 26-ին թաղվել գյուղի գերեզմանոցում:

ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ-ՄԱՐԳՍՅԱՆ ԱՆՆԱ ԱՐՍԵՆԻ, հաշվապահ-տնտեսագետ:

Ծնվել է 1924 թվականի հունիսի 6-ին, Քիշնև քաղաքում, Էջմիածնի գավառի Ապարանի գավառամասի Արագյուղ գյուղի վերաբնակիչ Արսեն Տեր-Պողոսյանի ընտանիքում:

1946 թվականին ավարտել է ռումինական միջնակարգ դպրոցը, 1948 թվականին՝ հաշվապահական դասընթացը:

1948 թվականին Հայաստան ներգաղթելուց հետո 1951-1974 թվականներին եղել է Երևանի կիսահաղորդիչների գործարանի 2-րդ կարգի ճարտարագետ-տեխնոլոգ:

1984 թվականից բնակվում է Արագյուղ գյուղում (հոր հիշատակին հատկացված տանը):

Ունի երկու դուստր՝ Վիկտորիան (ծն. 1944 թ-ին) և Մարիան (ծն. 1952 թ-ին) և մեկ որդի՝ Արամը (ծն. 1956 թ-ին):

ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՍԵՆ ՍԱՄՍՈՆԻ, ազգային, ռազմական գործիչ, 1918 թվականի մայիսի 22-29-ի Ապարանի հերոսամարտի կազմակերպիչ-աշխարհազորի հրամանատար, հունական բանակի գնդապետ (1920 թ.):

Ծնվել է 1875 թվականի մայիսի 19-ին, Էջմիածնի գավառի Ապարանի գավառամասի Արագյուղ գյուղում (Ռաֆֆու հերոս Խենթի՝ Սամսոն

Տեր-Պողոսյան Արսեն Սամսոնի

Տեր-Պողոսյան Աննա Արսենի

Տեր-Պողոսյանի առաջին կնոջ՝ Աննա Տեր Թադևոսյանի որդին է):

Ստացել է իր ժամանակի համար լավ կրթություն: Սովորել է Արագյուղի ծխական դպրոցում, ավարտել է Երևանի ուսուցչական սեմինարիան, Սանկտ-Պետերբուրգի հատուկ զինվորական դպրոցը:

19-րդ դարավերջին վերադարձել է Հայաստան և, ազգային-ազատագրական շարժման մասնակից իր ժամանակակից երիտասարդների նման, անցել է Արևմտյան Հայաստան և Անդրանիկի հրամանատարությամբ մասնակցել բազմաթիվ մարտերի՝ աչքի ընկնել արտակարգ խիզախությամբ ու հնարամտությամբ:

Հայ ազգային ազատագրական շարժման առաջնորդներից Նիկոլ Դումանի հրամանով 1905 թվականի հունիսի 4-ին իր մարտախմբով եկել է Ապարանի տարածաշրջանի Արտաշավան գյուղ և միավորելով տեղական ուժերը՝ մոտ 150 ձիավոր ու հետևակ մարտիկ, պլանավորել է պաշտպանել Ապարանի և Աշտարակի հայկական գյուղերի բնակիչներին Արագած և Արայի սարերի ստորոտներին գտնվող Ուշի, Համամլու, Քուրդալու գյուղերի տեղաբնիկ թուրքերի ոտնձգություններից: (*Ընդհանուր հրամանատարը Արսեն Տեր-Պողոսյանն էր իր 20 ձիավորով: Ջոկատի կազմում եղել են խմբապետներ Գրիգորը՝ 10 ձիավորով, Կարապետը՝ 13 հետևակով, Հովհաննեսը՝ 20 հետևակով, Արտեմը՝ 10 հետևակով, Բարսեղը՝ 19 հետևակով: Բոլորը միասին ընդամենը 98 զինվոր, ինչպես նաև 40-ից ավելի զինված գյուղացիներ*): Օրվա կեսին թուրքերը նախահարձակ են եղել Սաղմոսավանք գյուղի ուղղությամբ: Այստեղ թողնելով մի խումբ մարտիկների՝ Արսեն Տեր-Պողոսյանը հիմնական ուժերով փոխադրվել է Ապարանի գավառամասի Արայի գյուղ, սակայն ստանալով թուրքերի հարձակման մասին լուրը՝ հիմնական ուժերով հարձակվել և մինչև կեսգիշեր գլխովին ոչնչացրել է Արայի լեռան ստորոտին գտնվող երկու թուրքա-

կան գյուղերի և Ուշի գյուղի թուրք զինյալներին՝ հիմնովին այրելով այդ գյուղերի թուրքերի տները: Հայերն ունեցել են մեկ զոհ, թուրքերը տվել են 150 սպանված ու 180 վիրավոր:

1907 թվականին հերթական անգամ Արևմտյան Հայաստան զենք տեղափոխելիս, Արաքսի անցումի մոտ ձերբակալվել է ռուս սահմանապահների կողմից և բանտարկվել Կարսի բերդում: Մամսոն Տեր-Պողոսյանի բոլոր փորձերը որդուն ազատելու ուղղությամբ ապարդյուն են անցել: Դատապարտվել է 7 տարվա ազատազրկման և 1908 թվականին աքսորվել Սիբիր:

1917 թվականին ազատվել է կալանքից և վերադարձել Հայաստան: 1917 թվականին Հայաստանի Ազգային խորհրդի նախագահ Արամ Մանուկյանը հաշվի առնելով նրա անմնացորդ նվիրումը, անարդարությունների հանդեպ անհաշտ վերաբերմունքը և փորձը՝ նշանակել է Երևանի պարետ Արշո Շահխաթունուն ենթակա ռազմականացված ոստիկանության պետ:

1918 թվականի մայիսի 17-ին Արամ Մանուկյանի հրամանով ապարանցիներից կազմված պահապան ջոկատով ուղարկվել է Ապարան՝ այս ուղղությամբ թուրքերի հավանական հարձակման դեպքում գավառի պաշտպանությունը կազմակերպելու և դեպի Երևան թուրքերի առաջխաղացումը կասեցնելու համար:

1918 թվականի մայիսի 17-22-ին Ապարանի գավառամասի պետ Սեդրակ Ջալալյանի, շրջանի հոգևոր հովիվ Տեր Հովհաննես Տեր-Մկրտչյանի հետ նախապատրաստական մեծածավալ աշխատանք է իրականացրել Ապարանի և հարևան շրջանների բնակչության շրջանում՝ աշխարհազոր կազմակերպելու, ռազմավարական դիրքեր նախապատրաստելու, այդ ուղղությունում ընդհանուր խուճապի մթնոլորտը մեղմելու ուղղությամբ: Մայիսի 22-23-ին անմիջականորեն ղեկավարել է Ապարանի պաշտպանական առաջին մարտերը, և աշխարհազորայիններին միջոցով փակել Երևան արշավող թուրքական դիվիզիայի ճանապարհը՝ մինչև կառավարական ուժերը Դրաստամատ Կանայանի գլխավորությամբ հասել են Ապարանի ճակատ: Առանձնապես աչքի է ընկել Մայիսի 22-ին Միրաք գյուղի կամրջի մոտ նախապատրաստած ծուղակով: Թուրքական առաջապահ հետախուզական գումարտակը որևէ դիմադրության չսպասելով առաջացել է, իսկ Նիգավան գյուղի և Ուղտասարի լեռնաթևերում դարանակալած աշխարհազորայինները փակել են թուրքերի թիկունքը և անխնա ոչնչացրել շրջապատման մեջ հայտնված թուրքերին: Հետագա օրերին նույնպես հմտորեն է ղեկավարել իրեն վստահված չորս հազարից ավելի աշխարհազորայիններին:

Ապարանի հերոսամարտի ավարտից մեկ ամիս անց մեկնել է Պոլիս: Իր կյանքի գործը համարելով թուրքերի դեմ կռիվը, հույների կող-

մից ակտիվորեն մասնակցել է 1918 թվականին սկսված հույն-թուրքական պատերազմին: Մարտերից մեկում գնդակային վիրավորում է ստացել (*տարիներ անց այդ հողի վրա կատարված ծանր վիրահատությունից հետո մահացել է*): Ցուցաբերած ռազմական հմտության, կազմակերպական ունակությունների համար հունական բանակի ղեկավարության կողմից արժանացել է գնդապետի կոչման: Հունաստանի թագավոր Կոստանդինը նրան պարգևատրել է շքանշանով:

Հույն-թուրքական պատերազմի ավարտից հետո վերադարձել է Հայաստան և կրկին ծառայության անցել ռազմականացված ոստիկանությունում:

Խորհրդային Ռուսաստանի կողմից Հայաստանի Առաջին Հանրապետության անեքսիայից (ռազմակալում) հետո, 1920 թվականի դեկտեմբերին անցել է Թիֆլիս, ապա՝ հեռացել արտասահման:

1921-1927 թվականներին ապրել է Բեսարաբիայում, որ այդ ժամանակ Ռումինիայի մաս էր կազմում: 1927 թվականին անցել է Ռումինիա: Չտիրապետելով ռումիներենին, չունենալով աշխատանք՝ հայտնվել է ծանր կացության մեջ: Օգնության ձեռք են մեկնել տեղաբնակ հայերը և նա նշանակվել է Բուխարեստում բնակվող Մելիք անունով հայազգի մի մեծահարուստի քաղաքից դուրս գտնվող կալվածքի կառավարիչ:

Լինելով մեծ հայրենասեր, անհունորեն Հայաստանին սիրահարված մարդ, մշտապես մտածել է Հայրենիք վերադառնալու մասին: 1935 թվականին նրան նման առաջարկ է արել նաև եղբայրը՝ Վասակ Տեր-Պողոսյանը, Խորհրդային Հայաստանի նախկին ֆինանսների նախարարը, որ այդ ժամանակ պաշտոնավարում էր Անդրֆեդերացիայի ֆինանսների նախարարությունում: Այդ թվականներին ավելի քան 200 էջի վրա շարադրել է իր հուշերը (հուշերի երկու հաստափոր տետրերը, ցավոք, 1952-1953 թվականներին, կասկածելի հանգամանքներում, Երևանում սովորող որդու՝ Սամսոն Տեր-Պողոսյանի զբաղեցրած տնից անհետացել են):

1938 թվականի մարտ ամսին ծանր վիրահատության է ենթարկվել և մահից առաջ կտակել է մարմինը հողին հանձնել մայր հողում: Աճյունը դրվել է Բուխարեստի հայկական եկեղեցու գավթում: Հերոսին հրաժեշտ տալու համար եկել են երկրի բոլոր կողմերից: Հոգեհանգստի արարողությունը կատարել է անձամբ Ռումինահայոց եկեղեցու հովվապետ Վազգեն Պալճյան եպիսկոպոսը (ապագա Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը): Հերոսի մարմինը թաղվել է Բուխարեստի հայկական գերեզմանոցում: 1947 թվականին հոր կողքին թաղվել է նրա վաղամեռիկ դուստր 16-ամյա Մալվինան:

1948 թվականին կինը՝ Մարգարիտը, որդին՝ *Սամսոնը* և դուստրը՝ *Աննան* ներգաղթել են Հայաստան:

Բայազետի գավառի քարտեզը:

Բայազետի պարսպապատը, որից իջել է Սամսոնը՝ Խենը:
Լուսանկարը Գագիկ Հարությունյանի

Կովկասյան ճակատի
Երևանյան ջոկատի
հրամանատար
գեներալ-լեյտենանտ
Արզաս Տեր-Ղուկասովը:

Սամսոն Տեր-Պողոսյանը՝
ՍԱՄՍՈՆ Ա-ն՝ Խենթը

1840-1884 թվականներին Արագյուղի այս եկեղեցում քահանայություն է արել Տեր Հովհաննեսի որդի Տեր Պողոսը՝ Պողոսյանների գերդաստանի անվանադիրը:

Սամսոն Տեր-Պողոսյանը՝ Խենը

Խենի կիսանդրին Արա գյուղում

Արսեն Սամսոնի Տեր-Պողոսյանը՝ ԱՐՍԵՆ Ա-ն՝ Ապարանի հերոսամարտի աշխարհազորի հրամանատարը:

Արսեն Տեր-Պողոսյանը ռազմական դպրոցի համազգեստով:

Արսեն Տեր-Պողոսյանի կինը՝ Մարգարիտան դստեր Աննայի հետ:

Արսեն Սամսոնի Տեր-Պողոսյանը Երևանի ուսուցչական սեմինարիայի համադասարանցու հետ շախմատ խաղալիս:

Արսեն Սամսոնի Տեր-Պողոսյանը Երևանի ուսուցչական սեմինարիայում սովորելիս:

Արսեն Տեր-Պողոսյանը ընկերոջ հետ:

Սամսոն Արսենի Տեր-Պողոսյանը կնոջ՝ Կիմա Ղազարյանի հետ:

Արսեն Սամսոնի Տեր-Պողոսյանի՝ ԱՐՍԵՆ
Ռ-ի թոռը՝ երեքամյա ԱՐՍԵՆ Գ-ն

Дорогой и многоуважаемый
товарищ и брат Тигран!

Писать о моем отце и трудно и легко!
Трудно потому, что я, о нем не все достоверно
знаю, мне было лишь больше 11 лет когда он умер,
а это случилось в марте 1938 года в Бухаресте
(Румыния) после сложной операции в возрасте 61 года.
Легко и радостно о нем писать тому, что я его
до сих пор помню и люблю, уважаю и горжусь
как борца за освобождение армян от их кровожадных
варвар турков, за храбрость, за честность и твердый
характер, за бескомпромиссность и мужество,
справедливость в отношении с людьми и мн. др.
Он для меня был и остается идеалом для подра-
жания и я всю свою жизнь старался быть похожим
на него...

Սամսոն Արսենի Տեր-Պողոսյանի նամակի սկզբնամասը:

Հումբերքի որդի Ռաֆայելը դստեր հետ այցելել է պապի՝ Սամսոն Տեր-Պողոսյանի գերեզմանին:

Արագյուղի Ղորաբերանի հին բաղամասում պահպանվել են Տեր-Պողոսի տան պատերն ու կից շինությունների հիմնային մասերը: Նկարներում երևում են բուխարիով հյուրասրահի և մեծ սենյակի մնացորդները: Այս տանն են ծնվել Տեր-Պողոսյան տոհմի անվանի զավակները: Իշխանությունների խնդիրն է այս տան վերականգնումը և այդտեղ Տեր-Պողոսյանների բանգարանի հիմնումը:

ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՍԵՆ ՍԱՄՍՈՆԻ, Ռուսաստանի Դաշնության բանակի փոխգնդապետ (1986 թ.):

Ծնվել է 1954 թվականի հուլիսի 26-ին, Ստեփանավան քաղաքում:

1974 թվականին ավարտել է Տամբովի ռազմական հրետանային ուսումնարանը, ստացել զինվորական լեյտենանտի կոչում: 25 տարի ծառայել է հրետանային-հրթիռային զորամասերում. եղել է դիվիզիայի հրթիռա-հրետանային ծառայության պետ դիցիզիայի հրամանատարի տեղակալ:

1994 թվականին անցել է կենսաթոշակի:

Որդին՝ **Ռոմանը** (ծնվել է 1975 թ-ին) ստացել է թերի բարձրագույն կրթություն, աշխատում է շինարարությունում: Ռոմանի որդի **Արսենը** երեք տարեկան է:

Դուստրը՝ **Մարգարիտան** (ծնվել է 1979 թ-ին) 2001 թվականին ավարտել է Տամբովի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Նույն թվականին նշանակվել է «Տամբովագրոպրոմ համալիր» բաց բաժնետիրական ընկերության իրավաբանական բաժնի պետ:

Տեր-Պողոսյան Արսեն Սամսոնի

Տեր-Պողոսյան Մարգարիտա

ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ ԱՐՍԵՆԻ, տնտեսական աշխատող, գործարանի տնօրեն, *ՌԽՖՍՀ վաստակավոր նորարար, ՌԽՖՍՀ պատվավոր քիմիկ*:

Ծնվել է 1926 թվականի մայիսի 10-ին, Քիշնև քաղաքում:

Տարրական կրթություն ստացել է Բուխարեստի հայկական եկեղեցու ծխական դպրոցում, սովորելու ընթացքում ապրել է դպրոցի տնօրեն Գևորգ Ղազարյանի տանը: Այս դպրոցում նրան դասավանդել է նաև Վազգեն Պալճյանը՝ ապագա Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը: 1942 թվականին ավարտել է ռումինական վարժարանը (չորս տարվա ուսման վարձը վճարել է մեծահարուստ Մելիքը), 1946 թվականին՝ բակալավրի աստիճանով՝ ռումինական լիցեյը: Լիցեյում սովորելու չորս տարիներին նախ եղել

Տեր-Պողոսյան Սամսոն Արսենի

է տպարանի գրաշար, ապա՝ մոր հետ աշխատել է մանածագործական ֆաբրիկայի մանածագործ:

1948 թվականին մոր՝ Մարգարիտի և քրոջ՝ Աննայի հետ ներգաղթել է Հայաստան:

1953 թվականին ավարտել է Երևանի ճարտարագիտական ինստիտուտի քիմիական ֆակուլտետը:

1953-1966 թվականներին եղել է Գորկու մարզի Ձերժինսկ քաղաքի ռետինատեխնիկական գործարանի ճարտարագետ-քիմիկ, 1966-1988 թվականներին՝ Տամբով քաղաքի ռետինատեխնիկական գործարանի գլխավոր ճարտարագետ, ապա՝ գործարանի տնօրեն (այս գործարանում աշխատել է ավելի քան 8500 մարդ):

Բազմիցս ընտրվել է մարզային խորհրդի ժողովրդական պատգամավոր, արհմիության մարզային խորհրդի նախագահության անդամ:

Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի երկու, Հոկտեմբերյան հեղափոխության, Պատվո նշան շքանշաններով, «Աշխատանքային արիության համար», «Աշխատանքային գերազանցության համար» մեդալներով:

Տեր-Պողոսյան Սամսոն Պողոսի

ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ ՏԵՐ-ՊՈՂՈՍԻ, ռուսական բանակի գնդապետ, ազգային-ազատագրական պայքարի մարտիկ, Ռաֆֆու «Խենթը» վեպի հերոսի նախատիպը:

Ծնվել է 1851 թվականի մայիսի 10-ին, Էջմիածնի գավառի Ապարանի գավառամասի Արագյոզ գյուղում (հետագայում՝ Աշտարակի, ապա՝ Նաիրիի շրջանի Արագյոզ գյուղ), հոգևորականի ընտանիքում, եղել է ազատ գյուղացի:

Սկզբնական կրթություն ստացել է քահանա հոր մոտ, ապա սովորել է Էջմիածնի ծխական դպրոցում, ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Գերազանց տիրապետել է հայերեն, ռուսերեն, քրդերեն, թուրքերեն լեզուներին:

1870 թվականի հունվարի 29-ին ամուսնացել է համագյուղացի Աննա Տեր Թադևոսյանի հետ:

Կամավոր մասնակցել է 1877-1878 թվական-

ների ռուս-թուրքական պատերազմին, աչքի ընկել քաջությամբ, խենթ հերոսությամբ դուրս է եկել Բայազեդի շրջափակված բերդից և օգնության կանչել անհրաժեշտ ուժերի:

Գեներալ-լեյտենանտ Արզաս Տեր-Ղուկասովի միջնորդությամբ այդ սխրանքի համար ռուսական իշխանությունները նրան շնորհել են սպայի կոչում, Սուրբ Գեորգիի ոսկե խաչ և նշանակել ցմահ թոշակ:

Հետպատերազմյան տարիներին շարունակել է ծառայությունը ռուսական բանակում, կատարել է հետախուզական առաջադրանքներ, թարգմանչի պարտականություններ, ավելի ուշ զբաղվել է թիկունքային սպասարկման խնդիրներով, բարձրացել սպայական աստիճանակարգով և արժանացել գնդապետի կոչման: Ծառայել է Թիֆլիսում և Սանկտ-Պետերբուրգում:

Ծառայությունից արձակվելուց հետո վերադարձել է Հայաստան:

1903-1906 թվականներին եղել է Վայոց Ձորի գավառի գավառապետի օգնական, ապա՝ գավառապետի պաշտոնակատար, 1906-1911 թվականներին՝ Էջմիածնի գավառի ջրաբաշխ:

Իր անձնական միջոցներով 1890 թվականին հայրենի Արագյուղում հիմնել է դպրոց, որի ուսուցիչներին վճարելու համար մինչև իր մահը ամենամյա ֆինանսական օգնություն է հատկացրել:

1900-ական թվականների սկզբին Գայանե վանքի մոտ գտնվող գերեզմանոցում թաղված «Խենթը» վեպի հերոսուհի Լալայի նախատիպ աղջկա գերեզմանին դրել է տապանաքար՝ «Լալա» մակագրությամբ:

Առաջին կնոջից՝ Աննա Տեր-Թադևոսյանից, ունեցել է Եղիսաբեթ աղջկան (ծն. 1874 թ-ի նոյեմբերի 12-ին), Արսեն (ծն. 1875 թ-ի մայիսի 19-ին), Արտաշ (ծն. 1877 թ-ի հունիսի 12-ին) և Վասակ (ծն. 1878 թ-ին) որդիներին, երկրորդ կնոջից՝ Սրբուհուց՝ Հումբերտ, Պավել որդիներին և Խենթուշ աղջկան:

Մահացել է Էջմիածնում 1911 թվականի ամռանը: Թաղման արարողությանը մասնակցել են Էջմիածնի, Աշտարակի ու Ապարանի գավառամասերի գյուղերի գյուղապետեր ու գյուղացիներ, կառավարական պաշտոնյաներ, Էջմիածնի միաբանության վարդապետներ, եպիսկոպոսներ, գյուղերի քահանայական դասը: Թաղման հոծ թափորը հերոսի մարմինը հողին է հանձնել Էջմիածնի Գայանե վանքի ձախակողմյան պատի տակ:

Սկզբնապես գերեզմանին դրվել է փոքր տուֆ քարից խաչքար-տապանաքար, որի վրա փորագրված են եղել միայն «ԽԵՆԹ» և դրա տակ «Վարդան» բառերը: Հետագայում Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հրամանով խաչքար-տապանաքարի առջև տեղադրվել է բազալտից սալաձև տապանաքար, որի վրա փորագրված է. «Խենթ, Սամսոն Տեր-Պողոսյան, 1846-1911, Վարդան»: Կենսագրական տեղե-

Տեր-Պողոսյան
Սուրեն Սամսոնի

կությունններից ներքև քանդակված են իրար խաչված զույգ դաշույններ:

Պարգևատրել է Սուրբ Գեորգիի չորս խաչով, Սուրբ Աննայի շքանշանով և մեդալներով:

Հայրենի Արագյուղի գերեզմանոցի սկզբնամասում 1974 թվականին տեղադրվել է Սամսոն Տեր-Պողոսյանի՝ Խենթի կիսանդրին:

Ապարանի հերոսամարտի կազմակերպիչ *Արսեն Սամսոնի Տեր-Պողոսյանի* և ՀԽՍՀ ֆինանսների ժողովրդական կոմիսար *Վասակ Սամսոնի Տեր-Պողոսյանի* հայրն է:

Տեր-Պողոսյան
Սամսոն Սուրենի

ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՍԱՄՍՈՆԻ, գյուղատնտես:

Ծնվել է 1957 թվականի մայիսի 4-ին, Նիժեգորոդի մարզի Չերժինսկ քաղաքում:

1979 թվականին ավարտել է Տամբովի մարզի Միչուրինսկ քաղաքի գյուղատնտեսական ակադեմիան:

Խորհրդային տարիներին Տամբովի մարզի տարբեր տնտեսություններում աշխատել է գյուղատնտես, ապա՝ կոլտնտեսության նախագահ:

Ներկայումս ֆերմերական կազմակերպության ղեկավար է և ապրում է Տամբովի մարզի Սերեբրյակովսկի գյուղում:

Որդին՝ **Սամսոնը** (ծնվել է 1986 թ-ին) սովորում է Տամբովի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսում: Դուստրը՝ **Բելան**, հոգեբան է:

ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՍԱԿ ՍԱՄՍՈՆԻ, պետական գործիչ, ՀԽՍՀ ֆինանսների ժողովրդական կոմիսար (1922-1928 թվականներին):

Ծնվել է 1881 թվականի հունվարի 15-ին, Էջմիածնի գավառի Ապարանի գավառամասի Արագյուղ գյուղում (Սամսոն Տեր-Պողոսյանի և նրա առաջին կնոջ՝ Աննա Տեր-Թադևոսյանի որդին է, Արսեն Տեր-Պողոսյանի եղբայրը):

Տնտեսագիտական բարձրագույն կրթություն

ստացել է Չիտայում: Մինչև 1917 թվականն աշխատել է Սիբիրում: 1917-1918 թվականներին եղել է Ճապոնիայում: 1919 թվականին փոխադրվել է Հայաստան:

1905 թվականին հարել է բոլշևիկներին:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո կատարել է պատասխանատու աշխատանքներ: 1922-1928 թվականներին եղել է ՀԽՍՀ ֆինանսների ժողովրդական կոմիսար: 1929-1930 թվականներին եղել է Անդրֆեդերացիայի ֆինանսների ժողովրդական կոմիսարիատի կոլեգիայի անդամ, 1930-1934 թվականներին՝ Անդրֆեդերացիայի պետպլանի նախագահության անդամ:

1934-1936 թվականներին տարբեր պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել Անդրֆեդերացիայի ֆինանսական մարմիններում:

Եղել է Ալեքսանդր Մյասնիկյանի, Աղասի Խանջյանի մտերիմ ընկերը:

Մահացել է 1936 թվականին (կարծիք կա, որ թունավորել են):

ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՎԱՍԱԿԻ, օդաչու, խորհրդային Հայրենական մեծ պատերազմի մասնակից:

Ծնվել է 1920 թվականին:

Ավարտել է ռազմաօդային ուսումնարան:

Մասնակցել է խորհրդային Հայրենական մեծ պատերազմին: Վերջին նամակը ստացվել է 1945 թվականին:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1

Արխիվային փաստաթղթեր

1859 թվականի Չափաբերական մատյան
(1859 թվականի մայիսի 22-ի մարդահամարի ցուցակ, ՀՀ Ազգային արխիվ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 133)

էջ 42-ի դարձերեսին

24. Տ/է/ր Պողոս տ/ե/ր Հովհաննիսեան 56
որդիները **1. Հովհաննէս 38**
2. Գրիգոր 30
3. Կարապետ 18
4. Սամբսոն 8
եղբորորդին **Միլիտոն Պ/ետ/րոսի 15:**

Եվ 5 կին (բոլորը միասին 11 մարդ):

Ծանոթագրություն. Համաձայն այս տեղեկության, Սամսոն Տեր-Պողոսյանի հայրը՝ Տեր Հովհաննեսի որդի Տեր Պողոսը, ծնվել է 1803 թվականին, նրա որդիներ Հովհաննեսը՝ 1821, Գրիգորը՝ 1829, Կարապետը՝ 1841, **Սամսոնը՝ 1851** թվականներին: Այլ աղբյուրներում նշվել է, որ Սամսոն Տեր-Պողոսյանը ծնվել է 1846 թվականի մայիսի 10-ին:

1886 թվականի Չափաբերական մատյան
(1886 թվականի մարդահամարի ցուցակ, ՀՀ Ազգային արխիվ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 212)

էջ 791

33.23.	**Միլիտոն Պետրոսի**	**43**	**(տարեկան)**
	մայրը Մարգարիտ	**72**	
	կինը Մարիամ	**39**	
	որդիները Պետրոս	**15**	
	Գրիգոր	**11**	
	Մամիկոն	**6**	
	Լևոն	**3**	
	դուստրերը Սինամ	**15**	
	Դշխու	**6**	

էջ 809-810

85. - .	Հովհաննես Տեր Պողոսյան	56	
	կինը Թազագյուլ	50	
	որդին Վաղարշակ	16	
	մահ. Գրիգոր եղբոր որդին Նիկողոս	22	
	Նիկողոսի կինը Աննա	20	
86. - .	Կարապետ Տեր Պողոսյան	46	
	կինը Գարան	42	
	որդիները Զոհրաբ	19	
	Արմենակ	16	
	Հարություն	6	
	դուստրը Եսթեր	5	
87. - .	պարուչիկ Սամսոն Տեր Պողոսյան	35	
	կինը Աննա	33	
	որդիները Արսեն	11	(ծն.19.05.1875 թ.)
	Ոսկան	4	

Ծխամատյան 1

1855-1879 թվականներ (բացակայում է 1875 թ-ը)
(ՀՀ Ազգային արխիվ, ֆոնդ 47, ցուցակ 5, գործ 801)

Ծխամատյան 2

1881-1915 թվականներ (բացակայում են տարբեր թվականներ)
(ՀՀ Ազգային արխիվ, ֆոնդ 47, ցուցակ 5, գործ 613)

Հովհաննես Տեր-Պողոսյանը և նրա օրինավոր կին Քիշմիշ Հարությունյանը ծնել են՝

1. 1856 թ-ի օգոստոսի 1-ին դուստր Իսկուհի,
2. 1859 թ-ի հունվարի 21-ին դուստր Անատոլա,
3. 1861 թ-ի դեկտեմբերի 5-ին դուստր Մարգարիտ,
4. 1864 թ-ի ապրիլի 15-ին դուստր Մագքաղ,
5. 1867 թ-ի ապրիլի 23-ին որդի Խորեն,*
6. 1870 թ-ի մայիսի 1-ին դուստր Թամամ:

*) ***Ծանոթություն.*** *Խորենի մասին այլուր ուրիշ ոչինչ հայտնի չէ: Մինչդեռ այլ աղբյուրներից հայտնի է, որ Հովհաննես Տեր-*

Պողոսյանն ունեցել է Վաղարշակ անունով որդի, որը 1910 թվականին ձեռնադրվել է Արագյուղի ծխատեր քահանա Տեր Պողոս անունով, սակայն 1911 թվականին մահացել է:

Գրիգոր Տեր-Պողոսյանը և նրա օրինավոր կին Ալմաստ Պետրոսյանը ծնել են՝

1. 1857 թ-ի օգոստոսի 8-ին դուստր Թագուհի,
2. 1859 թ-ի փետրվարի 1-ին դուստր Համասփյուռ,
3. 1861 թ-ի հուլիսի 8-ին դուստր Երան,
4. 1864 թ-ի նոյեմբերի 2-ին որդի Նիկոլ (Նիկողոս):

Կարապետ Տեր-Պողոսյանը և նրա օրինավոր կին Գարան Հովհաննիսյանը ծնել են՝

1. 1861 թ-ի հոկտեմբերի 7-ին դուստր Ուստիան,
2. 1864 թ-ի մայիսի 15-ին դուստր Անուշիկ,
3. 1866 թ-ի օգոստոսի 7-ին որդի Գրիգոր,
4. 1868 թ-ի օգոստոսի 14-ին որդի Մեխակ,
5. 1870 թ-ի մայիսի 15-ին դուստր Փեփրոնե,
6. 1882 թ-ի սեպտեմբերի 22-ին որդի Խաչատուր,
7. 1885 թ-ի հունվարի 12-ին դուստր Ասանեթ:

Սամսոն Տեր-Պողոսյանը և նրա օրինավոր կին Աննա Տեր-Թադևոսյանը ծնել են՝

1. 1874 թ-ի նոյեմբերի 12-ին դուստր Եղիսաբեթ,
2. 1877 թ-ի հունիսի 12-ին որդի Արտաշ,
3. 1881 թ-ի հունվարի 15-ին որդի Վասակ:*

*) ***Ծանոթություն.*** *1886 թվականի մարդահամարի ցուցակից հավաստի հայտնի է, որ Սամսոն Տեր-Պողոսյանը 1875 թվականի մայիսի 19-ին ունեցել է Արսեն անունով որդուն: Եղիսաբեթ դստեր և Արտաշ որդու հետագա ճակատագիրն անհայտ է: Սամսոն Տեր-Պողոսյանի առաջին կինը՝ Աննա Տեր-Թադևոսյանը, նախքան 1882 թվականը, երիտասարդ հասակում մահացել է: Սամսոնի մյուս զավակները՝ Հումբերտը, Պավելը և Խենթուշը ծնվել են երկրորդ կնոջից՝ Սրբուհուց, մինչև 1910-ական թվականների կեսերը: Նրանց անունները Արագյուղի ծխամատյանում բացակայում են: Հավանաբար այդ ժամանակ Սամսոն Տեր-Պողոսյանը վերջնականապես հաստատվել էր Երևան քաղաքում:*

Միլիտոն Պետրոսյանը և նրա օրինավոր կին Մարիամ Մելքոնյանը ծնել են՝

1. 1871 թ-ի փետրվարի 15-ին որդի Պետրոս,
2. 1875 թ-ի օգոստոսի 23-ին դուստր Եսթեր,
3. 1877 թ-ի մայիսի 10-ին որդի Մելքոն,
4. 1879 թ-ի մայիսի 22-ին որդի Մամիկոն,
5. 1881 թ-ի փետրվարի 23-ին դուստր Հեղինե:

Վաղարշակ Հովհաննեսի Հովհաննիսյանը և նրա օրինավոր կին Մարան Կարապետյանը ծնել են՝

1. 1889 թ-ի սեպտեմբերի 14-ին որդի Պողոս:

Նիկոլ (Նիկողոս) Գրիգորի Գրիգորյանը և նրա օրինավոր կին Աննա Ստեփանյանը ծնել են՝

1. 1893 թ-ի ապրիլի 18-ին դուստր Վարդանուշ,
2. 1897 թ-ի ապրիլի 18-ին դուստր Տիգրանուհի:

Մամիկոն Միլիտոնի Պետրոսյանը և նրա օրինավոր կին Սուսամբարը ծնել են՝

1. 1912 թ-ի հոկտեմբերի 1-ին որդի Գևորգ:

Լևոն Միլիտոնի Պետրոսյանը և նրա օրինավոր կին Իսկուհի Մարտիրոսյանը ծնել են՝

1. 1912 թ-ի նոյեմբերի 20-ին դուստր Սաթենիկ (մահացել է 1960 թվականի օգոստոսի 29-ին):

2

Տեր-Պողոսյանների (Պետրոսյանների, Հովհաննիսյանների) մասնակցությունը Ապարանի հերոսամարտին

1. Գրիգորյան Ավետիք Նիկոլի (18-- -),
2. Հովհաննիսյան Պողոս Վաղարշակի (1889 -),
3. Պետրոսյան Մելքոն Միլիտոնի (1877 -),
4. Պետրոսյան Մամիկոն Միլիտոնի (1879 -),
5. Տեր-Պողոսյան Արսեն Սամսոնի (1875-1938):

3

Տեր-Պողոսյանների (Պողոսյանների) մասնակցությունը խորհրդային Հայրենական մեծ պատերազմին

1. **Պողոսյան Հումբերթ Արսենի,** ծնվել է 1901 թվականին Արագյուղում, զորակոչվել է 1942 թվականին, շարքային, մահացել է 1943 թվականի մարտի 17-ին:

2. **Պողոսյան Կոլյա Ավետիքի (1921-2006),** ծնվել է Արագյուղում: Զորակոչվել է 1942 թվականին, ծառայել է հորեղբոր որդու՝ Վաչագան Պողոսյանի հետ Կերչում: Ոտքից վիրավորվել է: Ապաքինվելուց հետո մասնակցել է պատերազմին մինչև ավարտը: Զորացրվել է 1946 թ-ին, բնակվել է Երևան քաղաքում, աշխատել է առևտրի բնագավառում:

3. **Պողոսյան Վաչագան Վանուշի,** ծնվել է 1921 թվականին Արագյուղում, զորակոչվել է 1942 թվականին, շարքային, զոհվել է 1943 թվականին Կերչում:

4. **Տեր-Պողոսյան Վարդան Վասակի,** ծնվել է 1920 թվականին, օդաչու, զոհվել է 1945 թվականին:

4

Տեր-Պողոսյանների (Պողոսյանների) մասնակցությունը Արցախյան հերոսամարտին

1. **Տեր-Պողոսյան Տիգրան Վաղինակի** (ծն.1964 թ., Երևան): 1992 թվականին կամավոր մասնակցել է Արցախյան ազատամարտին:

5

Նամակներ

(Արսեն Տեր-Պողոսյանի որդի Սամսոն Տեր-Պողոսյանի նամակը Տիգրան Պետրոսյանցին)

Թանկագին և հարգարժան ընկեր և եղբայր Տիգրան

Իմ հոր մասին գրելը և դժվար է և հեշտ: Դժվար է այն պատճառով, որ ես նրա մասին ամեն ինչ չէ, որ վավերական գիտեմ, ես մի փոքր մեծ էի 11 տարեկանից, երբ նա մահացավ, իսկ այդ պատահել է 1938 թվականի մարտին Բուխարեստում (Ռումինիա), ծանր վիրահատությունից հետո, 61 տարեկան հասակում: Հեշտ ու հաճելի է նրա մասին գրելը, քանի որ ես նրան մինչև այսօր հիշում ու սիրում եմ, հարգում ու համարում եմ անհիծյալ ու բարբարոս թուրքերից հայության ազատագրության պայքարի մարտիկ, քաջության համար, ազնվության և կայուն բնավորության համար, փոխհամաձայնությունների չգնալու և տղամարդության համար, արդարամտության և մարդկանց նկատմամբ ունեցած վերաբերմունքի և շատ այլ բաների համար: Նա առ այսօր ինձ համար եղել և մնում է ընդօրինակման տիպար և իմ ամբողջ կյանքում ես փորձել եմ նմանվել նրան...

Լավ հիշում եմ, որ տարագրության օրերին, առանց լեզվի իմացության, բարեկամների ու ընկերների որքան դժվար էր նրա համար ապրուստի միջոցներ հայթայթելը: Որպես տարագիր, երբ տեղացիները մեզ բոլորիս նայում էին իզգոյի նման, դժվար էր նորմալ աշխատանք գտնելը: Մենք ապրում էինք Նանսենի անձնագրի հովանավորությամբ և օգտվում էինք միայն տեղի հայության բարեկամությամբ, իսկ նրանց թիվը շատ քիչ էր: Այդ հայերը գիտենալով նրա պատմությունը, «Խենթ»-ի պատմությունը՝ միջնորդեցին հորս աշխատանքի տեղավորվել տեղաբնիկ հարուստ հայի, հողատեր Մելիքի մոտ (վաղուց Ռումինիայում բնակվող):

Մելիքը Բուխարեստից ոչ հեռու ուներ կալվածք՝ մոտ 500 հեկտար մշակովի հողով, խաղողի և պտղատու ծառերի մեծ այգով, այդտեղ կար տուն-դղյակ, ծառաների համար տուն (որտեղ մեզ տեղավորեցին), արտադրական կարողություններ: Ահա այստեղ նրան պետք էր կառավարիչ՝ աշխատանքը բաց էր թողնված և հայրս ուրախությամբ ձեռնամուխ եղավ այդ աշխատանքին: Նա լիքն էր էներգիայով: Ուրախալի էր, որ նա տիրապետում էր խաղողագործի և պտղաբույծի գործին: Այդ ժամանակ նաև արդեն որոշ չափով խոսում էր ռումիներեն:

Հայրիկի մոտ ի հայտ եկան կազմակերպչական կարողություններ: Արագ հասկացավ ինչն ինչոց է և շուտով այս կալվածքը սկսեց բերել լավ եկամուտներ: Կալվածքի տերը հիմնականում ապրում էր մայրաքաղաքում և երբ այցելում էր կալվածք՝ ուրախանում էր հայրիկի հաջողություններով: Տարեկան եկամուտների հաշվին, որպես պարգև, նա աշխատավարձից դուրս, հայրիկի համար սահմանեց տոկոսավճարներ: Ահա այդպես մեր ընտանիքը սկսեց ավելի բարվոք ապրել:

Ես սովորում էի մայրաքաղաքում և ապրում էի հայկական 7-ամյա դպրոցի տնօրեն, հորս ընկեր Գեորգ Ղազարյանի տանը: Նրանք մոտիկ ծանոթներ էին և նա միակն էր, ում հետ հայրս առընչվում էր: Ես հետո իմացա, որ հայրս հիասթափվել է և չի ճանաչել ոչ «աջերին», ոչ «ձախերին»: Այդ ժամանակ Դրոն Բուխարեստում էր: Բայց հայրս նրա հետ չէր առնչվում: Մայրս և երկու քույրերս գյուղում էին և օգնում էին հորս:

Դպրոցում բացի Ղազարյանից դասավանդում էին Վազգեն Պալճյանը (Բուխարեստի Հայ Առաքելական եկեղեցու ապագա եպիսկոպոսը, հետո՝ Ամենայն Հայոց կաթողիկոս) և ուրիշ շատ պատրաստված և ուժեղ ուսուցիչներ: Ես ստացել եմ շատ լավ նախնական կրթություն և երբ քննություն էի հանձնում ռումինական գիմնազիա ընդունվելու համար՝ 10 միավորի համակարգում ստացա ամենաբարձր 9,33 միավոր, միայն այդ պայմանով ինձ՝ հայիս (առանց ռումինական քաղաքացիության) ընդունեցին ռումինական գիմնազիա: Վերջապես մեր կյանքը օտարության մեջ կարգավորվեց և թվում էր, թե այն հավերժ է...

Հայրս սկսեց գրել իր հիշողությունները: Դրանք գրեց երկու հաստափոր տետրերի մեջ (մոտ 200 էջ): Նրան օգնում և խմբագրում էր Գեորգ Ղազարյանը, որը տվյալ ժամանակահատվածի Հայաստանի դեպքերին լավ ծանոթ էր: Ղազարյանը շատ զարգացած մարդ էր, ուժեղ մաթեմատիկոս... Մի խոսքով ես նրան շատ էի հարգում և սիրում էի, ինչպես հորս:

Հայրս ամեն ինչ գրեց և ավարտեց իր հիշողությունները, բայց ես այն չկարողացա կարդալ, թեև գրված էր շատ գեղեցիկ ձեռագրով, որովհետև վատ գիտեի հայերեն ձեռագիր տառերը, բայց այն, ինչ հստակ հասկացա, այդ հիշողություններում խոսվում էր անձամբ իր մասնակցությամբ բոլոր դեպքերի մասին, թուրքերի դեմ հայերի ծավալած պայքարի մասին, այն ճակատամարտերի մասին, որոնց ինքը մասնակցել էր, իր խիզախ ձիու՝ «Ցոլակի» մասին, որին ոչ մի կերպ չէր մոռանում, ընկեր-համագործակիցների մասին, Դրոյի և Անդրանիկի մասին, հայ ժողովրդի ողբերգության մասին, որ իրագործեցին թուրք գլխակեր ենիչերիները: Հայրս անմնացորդ սիրում էր իր Հայրենիքը և միշտ մտածում էր վերադարձի մասին... բայց դժբախտաբար նրա երազանքը չիրականացավ:

Նա չէր սիրում տեղի «ձախակողմ» հայերին; Նա կարծում էր, որ հենց նրանք են դավաճանել Հայրենիքին (բայց նաև Դրոյի հետ հատկապես չուներ): Եվ հայրս առանձնացել էր իր գյուղում, աշխատում էր ամբողջ ուժով, որպեսզի ինչքան հնարավոր է ավելի գումար կուտակի և մայրիկին ասում էր. «ինչ իմանանք, թե դեռ ինչեր կարող են լինել»:

Սիրելի Տիգրան, հորս հայաստանյան կյանքի և գործունեության վերաբերյալ ավելի շատ տեղեկություն կարող ես հայթայթել այլ աղբյուրներից Երևանում, Էջմիածնում, Ապարանում (իմիջիայլոց, երբ տարիներ առաջ ես եղա Ապարանում, այցելեցի գերեզմանոց և պապիկի հուշարձանը, հասկացա, որ մարդիք շատ բան գիտեն իմ պապի և հորս մասին): ...

Այնուամենայնիվ վերադառնանք իմ պատմությանը: Հորս հիշողությունների և Գևորգ Ղազարյանի ճակատագիրը շատ տխուր ու ողբերգական է:

Գևորգ Ղազարյանին 1946 թվականին, երբ Բուխարեստում էին գտնվում խորհրդային զորքերը, իր տարեց կնոջ հետ (ես նրան «մեծ մամա» էի անվանում) ձերբակալեցին և տարան ինչ որ տեղ Ռուսաստանի խորքերը: Ես շատ ծանր տարա այդ հարվածը և ցավում եմ նրանց համար առ այսօր: Հորս «Հիշողությունները» ես մեծ դժվարությամբ պահպանեցի, անցկացրեցի խորհրդային սահմանը (Խորհրդային Միություն ներգաղթելիս՝ Բաթումիում մեզ սահմանակեցուցիչ ստուգման ենթարկեցին), բայց պահպանել չկարողացա, քանի որ այն անհայտ հանգամանքներում անհետացավ Երևանում, երբ սովորում էի ճարտարագիտական ինստիտուտում: Ես առ այսօր չեմ կարողանում մտածել, թե դրանց մասին ո՞վ է իմացել: Ես բնակվում էի մորս քրոջ տանը... Մի խոսքով, ափսոս, բայց այդ տետրերը չկան:

Հայրս մահացավ 1938 թվականին, երբ ընդամենը 61 տարեկան էր: Մահից որոշ ժամանակ առաջ նա Երևանից նամակ ստացավ իր եղբայր Վասակ Տեր-Պողոսյանից: Վերջինս նրան կոչ էր անում վերադառնալ Հայրենիք: Հայրս ուզում էր հենց այդպես վարվել և համոզում էր մորս. «արի թողնենք այս կալվածքը և վերադառնանք, չէ որ մենք հայ ենք»:

Բայց... այդ ցանկությանը վիճակված չէր իրականություն դառնալ (և գուցե լավը այդ էր): Նա շուտով հիվանդացավ, նրան վիրահատեցին ու մահացավ:

Նրան թաղեցին մեծ հանդիսավորությամբ՝ որպես հայ ժողովրդի հերոսի և հերոսի որդու: Նրա մարմինը հրաժեշտի համար դրվեց կաթողիկե եկեղեցու գավթում: Տեղի հայերն անվերջանալի շարքով գալիս էին հրաժեշտ տալու հերոսին: Հայ եպիսկոպոսն անձամբ էր կարդում աղոթքը և պատմում էր նրա կյանքի և պայքարի մասին, նրա ընկերները թախծում էին ու մեզ հետ միասին լալիս:

Հորս թաղեցին հայկական գերեզմանոցում: Տարիներ անց այդտեղ թաղեցին նաև իմ շատ սիրելի փոքր քրոջը՝ Մալվինային, որ ընդամենը 16 տարեկան էր: Մենք չկարողացանք նրան փրկել. բժիշկները ցածրակարգ էին, իսկ լավ բժշկության համար մենք աղքատ էինք և փող չունեինք: Հայրիկի մահից հետո մեր՝ մայրիկի, երկու քույրերիս կյանքը վատթարացավ: Կալվածքի տերը վռնդեց մորս և չվճարեց հորս աշխատած գումարները (դրանք պահվում էին նրա մոտ) և մենք, առանց ապրելու միջոցների, հայտնվեցինք Բուխարեստում: Մայրս ընդամենը 38 տարեկան էր (նա հորս հետ ամուսնացել էր 18 տարեկան հասակում Երևանում): Նա հորս շատ էր սիրում և մինչև կյանքի վերջը մնաց նրան հավատարիմ: Ընկերները օգնեցին և մայրիկն աշխատանքի անցավ տրիկոտաժի ֆաբրիկայում, իսկ ես շարունակեցի ուսումս գիմնազիայում: Կարծես կալվածատիրոջ խիղճը արթնացավ և նա իմ ուսման վարձը վերցրեց իր վրա: Մելիքը Բուխարեստում ուներ մեծ տուն, իսկական պալատ, ուներ շատ ծառաներ, խոհարարներ և նրանց հետ ինձ տեղավորեց նկուղում, որտեղ ես ապրեցի 4 տարի և ավարտեցի գիմնազիայի 4 դասարանները: Վարժարանում ուսումս շարունակելու համար հանձնեցի քննությունները և պիտի սովորեի ևս 4 տարի, որպեսզի ստանայի ատեստատ, բակալավրի դիպլոմ՝ ինստիտուտ ընդունվելու համար: Եվ այստեղ ինձ կանչում է Մելիքը և ասում. «բավական է սովորես, գնա կոշկակարի աշակերտ»: Ես հրաժարվեցի: Նա ինձ վռնդեց և ասաց, որ էլ ոչ մի կոպեկ իմ վրա չի ծախսի: Ես աշխատանքի տեղավորվեցի տպարանում՝ գրաշար և կազմարար (այդ մասնագիտությունը սովորել էի աշխատանքի ուսուցման դասերին), որոշ ժամանակ անց տեղափոխվեցի մորս ֆաբրիկան և դարձա ջուլիակի օգնական, ապա՝ ջուլիակ և շարունակեցի ուսումս վարժարանում:

Ես դարձա լավ ջուլիակ և ինձ միշտ գովում էին:

Այդպես էլ մենք ապրում էինք... Սա օտար երկրում երկար տառապանքի և նվաստացման պատմություն է:

Եվ, երբ 1946 թվականին հայերին հավաքեցին հայկական եկեղեցու մոտ, եպիսկոպոսը (Վազգեն Պալճյանը, ապագա Ամենայն Հայոց կաթողիկոսը) և խորհրդային դեսպանատան աշխատակից Բաբգեն Աստվածատուրյանը հայտնեցին, որ Խորհրդային Միությունը որոշել է հայերի ներգաղթ կատարել՝ մենք շատ ուրախացանք և առանց մտորելու գրվեցինք ցուցակում:

1946 թվականին ավարտեցի ուսումս, ատացա ատեստատը և բակալավրի դիպլոմը և 1948 թվականին, երբ եկավ մեր հերթը, վերադարձանք Հայաստան, հայերի մոտ, որոնք մեզ սիրով ընդունեցին: Այն ամենը, որ ներգաղթի ցուցակը կազմելիս խոստացվել էր մեզ՝ անվճար բնակարան, բուժսպասարկում, աշխատանք և ինձ համար ամենակարևորը՝ ուսումը, ամբողջովին կատարվեց: Մենք

պետության հատկացրած գումարով տուն կառուցեցինք, որտեղ մինչև իր կյանքի վերջը ապրեց մայրս, նրան աշխատանք տվեցին Շահումյանի շրջանում, տնից ոչ հեռու, ես ընդունվեցի Երևանի ճարտարագիտական ինստիտուտի քիմիական ֆակուլտետը:

1953 թվականին ավարտեցի ինստիտուտը, ստացա ճարտարագետի դիպլոմ, ամուսնացա համակուրսեցուս, ճարտարագետ Կիմա Սուրենի Ղազարյանի հետ և ուղեգրով աշխատանքի մեկնեցինք Գորկու մարզի Ջերժինսկ քաղաք: Գործարանում մեզ նշանակեցին քիմիկներ: Այս գործարանում ես արտադրության կազմակերպչի մեծ փորձ ձեռք բերեցի: 1966 թվականին նախարարությունը ինձ և կնոջս փոխադրեց Տամբով քաղաք, որտեղ ես նշանակվեցի քիմիական պաշտպանության միջոցներ արտադրող մեքենաշինական գործարանի գլխավոր ճարտարագետ: 8 տարի անց ես նշանակվեցի գործարանի տնօրեն, որտեղ աշխատեցի մինչև 1988 թվականը, մինչև թոշակի անցնելս: Ինձ նշանակվեց հանրապետական կարգի թոշակ, դարձա աշխատանքի վետերան, շատ շքանշաններ ի ասպետ, ՌԽՖՍՀ վաստակավոր նորարար, պատվավոր քիմիկոս:

Սրանով նամակս ավարտում եմ: Սնում է միայն շնորհակալություն հայտնել, որ զբաղվում եք մեր տոհմի պատմությամբ:

Հարգանքով՝ Սամսոն Արսենի Տեր-Պողոսյան:

Տամբով, 10 մայիսի 2004 թ.:

(Արսեն Տեր-Պողոսյանի որդի Սամսոն Տեր-Պողոսյանի նամակը Տիգրան Պետրոսյանցին)

Հարգարժան ընկեր, եղբայր Տիգրան

Ես շատ շնորհակալ եմ Ձեզնից իմ հոր հիշատակի, իմ տոհմի, իմ հանդեպ տածած այդօրինակ ուշադրության համար:

Ձեզ հետագա հաջողություններ եմ մաղթում գրողի և պատմաբանի շնորհակալ աշխատանքում:

Բոլոր դեպքերում երկիրը կարիք ունի գրքերի, որոնք երիտասարդների մեջ դաստիարակելու են հայրենասիրություն և նրանց մշտապես հիշեցնելու են ժողովրդի հերոս որդիների մասին: Շնորհակալություն Ձեզ: Շնորհակալություն նվիրած գրքերի համար: Այդ գրքերը ջերմացրեցին իմ հոգին:

Ես պարտադիր կօգտվեմ դրանցից իմ թոռներին և ոչ միայն նրանց դաստիարակելու գործում: Ես արդեն ունեմ Արսեն անունով ծոռ: Նա դեռևս երեք տարեկան է: Նա իմ փոխգնդապետ որդի Արսենի թոռն է:

Իմ ընտանիքը բազմանդամ է՝ տասնչորս մարդ: 1953 թվակա-

նին, երբ Կիմա Սուրենի Ղազարյանի հետ Երևանից գործուղումով եկանք այստեղ աշխատելու՝ միայն երկուսով էինք: Այսօր 14 ենք: Ճիշտ է, ի մեծ սուգ ինձ, Կիման արդեն չկա, բայց աշխարհ են գալիս նորերը, որոնց մեջ մեր հայկական գենն է: Եվ դեռ ծնվելու են նոր Սամսոններ, Արսեններ, Սուրեններ և ուրիշ շատ Տեր-Պողոսյաններ...

Եվ նրանց բոլորի համար Ձեր գրքերը շատ օգտակար կլինեն:

Ձեզ հետ լրիվ համաձայն եմ պատմական Մեծ Հայաստանի հայկական անունների օգտագործման առումով. ճշմարիտ է, որ «չկա պատմական հայերեն անունը՝ չկա ժողովուրդը»:

Մեկ աննշան ուղղում: Իմ հայրը չէր կարող 1921-1927 թվականներին ապրել Բուլղարիայում, քանի որ և իմ ավագ քույր Աննան և ես ծնվել ենք Բեսարաբիայում, որ այն ժամանակ Ռումինիայի կազմում էր: Հայրս Հունաստան և Բուլղարիա մեկնել է 1924 թվականին: Հորս ծննդյան թվականը սխալ է նշվել. նա ծնվել է 1877 թվականին:

Մի խնդրանք էլ: Որքան հնարավոր է շատ գրեք Արևմտյան Հայաստանի մասին: Անհրաժեշտ է, որ ամբողջ աշխարհը նորից ու նորից և միշտ հիշի արևմտահայերի հերոսական պատմության մասին: Անհրաժեշտ է, որ բոլորը ճանաչեն և դատապարտեն թուրքերի ու քրդերի արյունալի գործողությունները: Որ հայերին վերադարձվեն վեհապանծ Արարատն ու մնացյալ բոլոր հողերը: Այդպես է ուզել իմ պապ Սամսոնը, իմ հայր Արսենը, Անդրանիկը և բոլոր նրանց զինակիցները:

Հարգանքով՝ Սամսոն
/Սամսոն Արսենի Տեր-Պողոսյան/:

Տամբով, 29 մարտի 2008 թ.:

6
Հուշեր

(Հատված Արսեն Տեր-Պողոսյանի կնոջ՝
Մարգարիտա Գրիշայի Տեր-Պողոսյանի հուշերից)

... Նրան (Արսենին՝ Տ.Հ.) սիրում էի, որովհետև նա քաջ էր, սիրում էր իր Հայրենիքը, սիրում էր անսահման և պատրաստ էր կյանքի գնով պաշտպանել իր երկիրը: Նա աղքատ էր, չուներ ոչ մի բան. ոչ տուն, ոչ փող: Սակայն այլասեր էր և իր վերջին կոպեկը կտար ավելի կարիքավորին: Նա բարի ու ազնիվ էր, անկեղծ, հավատարիմ իր ազգին: ... Ինձ համար կյանք չկար առանց իրեն: Նա իմ հույսն էր, իմ հավա-

տը, իմ պաշտելի հերոսը: Մինչև մահ նա կմնա իմ սրտում: Ինձ կներեք, որ շեղվեցի, որովհետև Նա եկել է ուշքիս առաջ, ես տեսնում եմ նրա գեղեցիկ հասակը, սև աչքերը, որ ոչ մի մարդ չունի աշխարհիս երեսին: Նա ապրում էր ինձ համար:

(Հուշերն ընդգրկում են ամուսնության օրերից միասին անցկացրած տարիների հատվածը: Դրանք երբեմն ժամանակային տարբեր դեպքերի միավորում են, որից դժվար է ճիշտ եզրահանգումների գալ, երբեմն հակասում են այլ աղբյուրներից հայտնի ու հավաստի պատմությանը: Եվ այդ ամենը հասկանալի է դառնում վերը շարադրված հատվածից, քանի որ Մարգարիտան առասպելական սիրով է սիրել Արսենին և նրան է վերագրել շատ ու շատ իրողություններ: Այս հուշերից իմացվում է նաև, որ Ապարանի պատմական հերոսամարտից հետո ծանր հարաբերություններ են ձևավորվել Դրոյի և Արսենի միջև՝ առաջինի կողմից թուրքերի հետապնդումը կանգնեցնելու պատճառով: Սա պատճառ է դարձել, որ Արսեն Տեր-Պողոսյանը չհնազանդվելու համար մի քանի օրով կալանավորվի: Այս հավաստի տեղեկությունն էլ լույս է սփռում արդեն Բուխարեստում Դրոյի և Արսենի սառը հարաբերությունների փաստի վրա, ինչի մասին իր նամակում նշել է Արսենի որդին՝ Սամսոն Արսենի Տեր-Պողոսյանը):

(Հատված Միհրան Հովհաննեսի Մուրադյանի նամակից ուղղված Սամսոն Արսենի Տեր-Պողոսյանին)

...Ձեր հանգուցյալ պապ, Ռաֆֆու «խենթ» Սամսոնին առաջին անգամ տեսել եմ 1908 թվականին իմ ծննդավայր Էջմիածնի շրջանի Գրամփա գյուղում, երբ նա Էջմիածնի գավառի ջրաբաշխն էր: Օգոստոսի կիզող օրերից էր: Սամսոն Տեր-Պողոսյանը եկավ սպիտակ ձիով: Գլուխը բաց էր, հագին սպիտակ վերնաշապիկ, դեմքը վարդագույն, գեր, լայն այտերով, արծվի հայացքով, գեղեցիկ ու մեծ աչքերով, լայնաթիկունք: Եկավ կանգնեց գյուղամիջի մեծ չինարի ծառի դիմաց: Գյուղացիները, որ մինչ այդ չորացող հողից էին խոսում՝ միանգամից վերադարձան իրականություն՝ փրկության ափ: Ծառի ստվերում անմիջապես գորգ գցեցին, բարձեր դրեցին ու հյուրին առաջնորդեցին հանգստանալու: Գյուղացիները խոսեցին երաշտի մասին, ասացին, որ եթե մոտակա օրերին ջուր չլինի՝ խաղողի ամբողջ բերքը կփչանա: Սամսոնը լսեց բոլորին և մի կես ժամից շքախմբով պտտվեց դաշտերում: Տեսածը գերազանցեց գյուղացիների պատմածը: Դաշտից վերադարձավ զայրագին ու ասաց, որ երկու օրից ջուրը կլինի: Նա խոսքի տեր մարդ էր ու գյուղացիները նրա խոսքին հավատում էին: Ջրաբաշխի պաշտոնը չափազանց դժվարին պաշտոն էր: Էջմիածնի գավառում հայտնի ջրաբաշխներ եղել էին, բայց Սամսոնի նմանը չկար: Նրա նման արդարադատ, անշահախնդիր, քաջ ու անվախ պաշտոնյա ոչ թե Հայաստանում, այլ Անդրկովկասում էլ չկար: Եվ եթե նա ասաց, որ ջուր կլինի՝ այդպես էլ լինելու էր: Եվ,

իրոք, երկու օրից Էջմիածնի գյուղերի կիզվող հողերը կենարար ջուրը ստացան...:

Միհրան Հովհաննեսի Մուրադյան

(Նամակը գրվել է 1984 թվականի մայիսի 13-ին: Հեղինակն այն ուղարկել է Տամբով՝ Սամսոն Արսենի Տեր-Պողոսյանին: 2004 թվականին վերջինս նամակն ուղարկել է Տիգրան Պետրոսյանցին):

7

Բանաստեղծական տողեր

Աշոտ Անդրանիկ Ստեփանյան

Ապարանի հերոսամարտը (*բառատող*)

...Քաջ Վարդանի նման էր կռվում Սեղրակը,
*Ետ չէր մնում նաև **Խենթի զավակը**,*
Էլ չէին նայում թուրքի զորքին, քանակին,
Ջարդում էին մեկ աջ, մեկ ձախ թուրքերին...:

Գարեգին Ապարանցի

Ապարանի հրաշափառ ճակատամարտը (Ե., 2005 թ., էջ 16-19)
(հատված պոեմից)

Արայի լեռան զմրուխտ լանջն ի վար
Խենթի գյուղն է լույսով զառեքվում,
Ուխտի են գալիս բյուր հազար հայեր,
Անմահ հերոսին գլուխ խոնարհում:
Գալիս են նրանք հոգով զորանան,
Իրենց արյունը հավատին խաչեն,
Դարերի վիշտն ու ցավը մոռանան,
Զորացած հոգով նոր պայքար մղեն:
Ասպետը եկավ իր զորախմբով,
Հրաման տվեց մեկնել Ապարան,
Մրմուռ կարոտից թեղած իր հոգով
Խաչակնքելով թեքվեց գերեզման:
Ծնկեց պապերի ծաղկած շիրիմին,
Կռացավ, տխուր մի հոգոց հանեց,
Արյան մեջ ցոլաց Խենթի խենթ ոգին
«Սուրն է փառահեղ, Հաղթանակ զորաց»:

Պապ, թոռդ եմ, եկել եմ այցի,
Արյուն է կաթում սրտիցս վառվող,
Միթե հայ մայրը միշտ պիտի լացի,
Իր գլխին տեսնի կեռ սուրը ճոճվող...
Պապ, ասկյարը Էրգիրն ավերեց,
Ծոցվոր, մեր, մանուկ սրի են քաշվել,
Էրգրի դաշտերի շեները վառեց,
Կարին ու Վանը քանդեց, ավերեց:
Պապ, զորավոր երկինքը վկա,
Թուրքի ցին երբեք այստեղ չի թռչի,
Մեր սրի ձայնով հաղթություն կգա,
Մեր գոռ ցասումը վաղը կշաչի:
Ծունկի եմ եկել քո լույս շիրիմին,
Թող խնկաբույրը երկինք բարձրանա,
Պապ, անպարտ է հայ ազգի ոգին,
Երբեք ու երբեք նա չի մահանա:
Աշխարհազորը ոտքի է ելել,
Եվ Ուտտասարում պատրաստ է կռվի,
Ծեր, մանուկ ու մայր դարձել են զինվոր,
Դարձել են զորեղ, անպարտ ֆիդայի:
... Էսադը կուզի մտնի Ապարան,
Սարդարապատին թիկունքից զարկի,
Պապ իմ, քո կամքով ու քո օրհնությամբ
Աշխարհազորով գնում ենք մարտի:
Տիրոջ Սուրբ Խաչը թող մեզ պահպանի,
Ուժ տա մեր բազկին, հոգին զորանա,
Շինական զորքին մարտադաշտ տանի,
Ամեն մի գեղջուկ մի Վարդան դառնա:
... Ննջեք հավատով, ով մեր Նախնիներ,
Սուրբ տաճարների զանգերն են շաչում,
Տեսլացած, անտես հայոց ոգիներ
Մեզ՝ ապրողներիս, մարտի են կանչում:
Արսենը նորից շիրիմն համբուրեց,
Բորբոքեց վառվող կրակը խեցու,
Խենթացած ոգով ձին ասպանդակեց,
Աշխետը ճախրեց հեծվորին հլու:
... Ու Խենթի որդին հրեղեն վարգում,
-Ժողովուրդ, ելեք, մեր հերթն է զարկի,
Թուրք ենիչերը դեռ չի հասկացել
Ո՞ւմ հոգու դեմ է դուրս եկել մարտի:
Մեր հավատամքի լուսեղեն տաճար,
Քո լույս վեհությամբ մեզ գոտեպնդիր,
Մեր Հավատամքի հրեղեն Խաչքար
Տիրոջ փառահեղ խաչով մեզ օծիր:

Չոն Ապարանի ճակատամարտի (*հատված երգից*)

...Կռվի դուրս ելան Նգա զավակները,
Նրանց կողքին էլ՝ Հայոց տան հարսները,
Արսեն ու Սեդրակ զորապետներ քաջ,
Կռիվ մղեցին դաժան, աննահանջ,
Երդվեցին կռվել, հողը սուրբ պահել,
Անարգ թշնամուց իսպառ ազատվել:

8

«ԽԵՆԹԸ» ՎԵՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ

Հայերեն

1. **1881 թ.**, Շուշի, Միրզաջան Մահտեսի Հակոբի տպարան, 400 էջ:
2. **1890 թ.**, («Ջալալեդդինի» հետ միասին), Մոսկվա, Մ.Բարխուդարյանի տպարան, 554 էջ:
3. **1905 թ.**, («Ջալալեդդինի» հետ միասին), Վիեննա, Մխիթարյան միաբանության տպարան, 524 էջ:
4. **1913 թ.**, («Ջալալեդդինի» հետ միասին, արևմտահայերեն), Կ.Պոլիս, Հրանտ Խտշյանի տպարան, 384 էջ:
5. **1913 թ.**, (արևմտահայերեն), Կ.Պոլիս, Հրանտ Խտշյանի տպարան, 308 էջ:
6. **1931 թ.**, («Ջալալեդդինի» հետ միասին), Աթենք, 364 էջ:
7. **1937 թ.**, Բեյրութ, մատենաշար «Ազդակ», 432 էջ:
8. **1937 թ.**, Բոստոն, «Հայրենիք» տպարան, 362 էջ:
9. **1955 թ.**, Երևան, Հայպետհրատ, Բաֆֆի, Երկերի ժողովածու, 10 հատորով, հ. 3, էջ 73-378:
10. **1962 թ.**, Երևան, Հայպետհրատ, Բաֆֆի, Երկերի ժողովածու, 10 հատորով (երկրորդ հրատարակություն), հ. 3, էջ 71-366:
11. **1966 թ.**, («Ջալալեդդինի» հետ միասին), Վիեննա, Մխիթարյան միաբանության տպարան, 378 էջ:
12. **1970 թ.**, («Հարեմի», «Ոսկի աքաղաղի» և պատմվածքների հետ միասին), Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 680 էջ:
13. **1978 թ.**, («Խաչագողի հիշատակարանի» հետ միասին), Երևան, «Սովետական գրող», 688 էջ:
14. **1982 թ.**, («Ջալալեդդինի» հետ միասին), Երևան, «Լույս» հրատարակչություն, («Դպրոցականի գրադարան» մատենաշար), 416 էջ:

15. 1984 թ., («Ջալալեդդինի», «Ղարիբ մշեցին»-ի հետ միասին), Ռաֆֆի, Երկերի ժողովածու, 10 հատորով, հ. 4, էջ 147-424:

Ռուսերեն

1. 1901 թ., Թիֆլիս, թարգմանությունը Ն.Մ. Կարա-Մուրզայի, 328 էջ:
2. 1908 թ., Թիֆլիս, թարգմանությունը Ն.Մ. Կարա-Մուրզայի (երկրորդ հրատարակություն), 282 էջ:
3. 1957 թ., Երևան, Հայպետհրատ, թարգմանությունը Ն.Մ. Կարա-Մուրզայի, Մ.Մկրյանի առաջաբանով, 313 էջ:
4. 1959 թ., Մոսկվա, («Ոսկի աքաղաղի» հետ միասին), Գոսլիտիզդատ, թարգմանությունը Ս.Խիտարովայի, Ն.Տեր-Հակոբյանի առաջաբանով, էջ 139-374:
5. 1962 թ., Երևան, Հայպետհրատ, թարգմանությունը Ն.Մ. Կարա-Մուրզայի, Մ.Մկրյանի առաջաբանով, 263 էջ:
6. 1969 թ., Երևան, «Հայաստան» հրատարակչություն, Մ.Մկրյանի առաջաբանով, 236 էջ:
7. 1978 թ., Երևան, «Սովետական գրող», թարգմանությունը Ս.Խիտարովայի, 294 էջ:

Վրացերեն

1. 1902-1903 թթ-ին, Թիֆլիս, թարգմանությունը Բ.Եվանգուլյանի, «Մոամբե» հանդես, հունվար-մայիս:
2. 1903 թ., Թիֆլիս, թարգմանությունը և առաջաբանը Բ.Եվանգուլյանի, 312 էջ:

Մոլդավերեն

1. 1958 թ., Քիշնև, թարգմանությունը Ն.Մուրզայի, 284 էջ:

Այլ օտար լեզուներով

1. 1902 թ., Պապագ (չեխերեն), թարգմանությունը Օ.Ս.Վետտիի (Ալ.Կուտելկայի), 454 էջ:
2. 1905 թ., Վիեննա (գերմաներեն), թարգմանությունը (*), 528 էջ:
3. 1908 թ., Ստամբուլ (թուրքերեն), «Իքդամ» պարբերականում:
4. 1926 թ., Բուխարեստ (ռումիներեն, հատվածներ), «Արարատ» շաբաթաթերթում, թիվ 23, էջ 24, թիվ 24, էջ 2-4, թիվ 25, էջ 2-3:
5. 1950 թ., Բոստոն (անգլերեն), թարգմանությունը տիկին Ջեյն Ս. Վինգեյթի, «Պայքարի» հրատարակություն, 362 էջ:
6. 1968 թ., Բուենոս-Այրես (իսպաներեն), թարգմանությունը անգլերենից Աղամ Ֆ. Սոսարի, խմբագրությամբ Ալիսիա Կիրակոսյանի, 396 էջ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրքեր

Գարեգին Ապարանցի, Ապարանի հրաշափառ ճակատամարտը (երկու պոեմ), ճակատամարտի մասնակիցների լուսանկարներ, Ե., 2005:
Գևորգյան Համլետ, Ազատագրական պայքարի հերոսապատումից, Հեղինակային հրատարակություն, Ե., 2006:
Դարյան Զ., Քասաղ, ժողովածու, Ե., 1962:
Դարյան Զ., Ասք Նգա, Ե., 1983:
Հայկական համառոտ հանգիտարան, հ. 4, Ե., 2003, էջ 735:
Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Ե., 1974-1987:
Շահխաթունեանց Յով., Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, 1842:
Պիկուլ Վ., Բայազետ (վեպ, ռուսերեն), Մոսկվա, 1985:
Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատոր չորրորդ, Ե., 1984,
Տիգրան Հայազն (Տիգրան Մնացականի Պետրոսյանց), Ապարանի հերոսամարտը, Հեղինակային հրատարակություն, Ե., 2005 թ., 54 էջ, 2 թերթ նկար, տպաքանակ՝ 1000 (առանձին տրվել է Արսեն Տեր-Պողոսյանի կենսագրությունը և առաջին անգամ Հայաստանում տպագրվել է նրա լուսանկարը):

Հոդվածներ

Դանղյան Հայկ, Ով է Խենքը, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1985 թ., թիվ 6, էջ 19-20 (տպագրվել է Սամսոն Տեր-Պողոսյանի լուսանկարը):
Դանղյան Հայկ, Բաֆֆու հերոսի նախատիպը Էջմիածնում, «Կոմունիզմի համար» (Էջմիածնի շրջանային թերթ), 1986 թ., 6 մայիսի, էջ 4:
Հովհաննիսյան Ջուլիետա, Բաֆֆու հերոսների նախատիպերը: Բաֆֆին Էջմիածնում, «Կոմունիզմի համար», 1986 թ.,1 ապրիլի, էջ 3:
Պետրոսյան Վլադիմիր, Նրանք հայրենիք էին պաշտպանում, Ապարանի ճակատամարտի 70-ամյակը, «Երեկոյան Երևան», 1988 թ., թիվ 123, էջ 3:
Պետրոսյանց Վիկտոր (Պետրոսյանց Տիգրան), Հերոսամարտի փառքն անմահ է. Բաշ-Ապարանի ճակատամարտի 70-ամյակը, «Ավանգարդ»., 1988 թ., 22 մայիսի, թիվ 63, էջ 2:
Պետրոսյանց Տիգրան, Բաշ-Ապարանի ճակատամարտին առնչվող մի քանի հարցեր, «Հայաստանի Հանրապետություն»., 1998 թ., 28 մայիսի, թիվ 103, էջ 5:
Մարգսյան Արամայիս, Խենքն ու իր գերդաստանը, «Հայրենիքի ձայն», 1968 թ.:
Ֆրանգուլյան Էդվարդ, Մեկը, որ հազար արժեր (Արսեն Տեր-Պողոսյանի մասին), «Ապարան», 1998 թ., 28 մայիսի:

Արխիվային նյութեր

ՀՀ Ազգային արխիվ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 133:
ՀՀ Ազգային արխիվ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 212:
ՀՀ Ազգային արխիվ, ֆոնդ 47, ցուցակ 5, գործ 801:
ՀՀ Ազգային արխիվ, ֆոնդ 47, ցուցակ 5, գործ 613:

ՀԵՌԱԽՈՍԱՑՈՒՑԱԿ

Ազգանուն, անուն, հայրանուն	բնակ.	բջջային
Պ		
Պողոսյան Ալբերտ Վանուշի	340302	093.338938
Պողոսյան Արմինե Ալբերտի	340302	
Պողոսյան Գայանե Ալբերտի	340302	
Պողոսյան Ռաֆայել Հումբերտի		094.302620
Պողոսյան Վանուշ Ալբերտի	340302	093.658887
Պողոսյան Տիգրան Ավետիքի	223481	091.721185
Պողոսյան Սամվել Վրույրի	276962	
Տ		
Տեր-Պողոսյան Սամսոն Արսենի	007.4752.532235	

ՏԻԳՐԱՆ ՀԱՅԱԶՆ

ԽԵՆԹԵՐԸ

Գրքի շապիկին օգտագործվել է վաղամեռիկ գեղանկարիչ Ռուբեն Ոսկանյանի «Վերածնունդ» նկարը

Խմբագիր՝ Մելանյա Պետրոսյանց
Գեղ. խմբագիր՝ Արգիշտի Պետրոսյանց
Շարվածքը, էջադրումը՝ Հրաչյա Պետրոսյանց

Ստորագրված է տպագրության 16.04.2008 թ.:
Ծավալը՝ 3+0.5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:

ԽԵՆԹ
ՍԱՄՍՈՆ
ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ
1846-1911
ՎԱՐԴԱՆ